«Յուռութուլունք դիսակախտոն յերես ծովուն ծրփային ,
«Մինչ ձըկունք մանր ընդ հեշտասէր դիակ մարմնոյն խաղային :

«Նինուաս տիրեալ Հայաստանի ղճնուշավան առ գերի ,
«Եւ յետ բաղում ժամանակաց դարձոյց ի դահ հայրենի ,
«Առեալ զերդումն ի Դերկեթեայ՝ կալ մըտերիմ առ ազդ իւր ,
«Եւ այս սլայման յաւուրս նախնեաց անողոդուելի համարիւր :

«Եյ՞ ինքն իսկ դշխոյն Դերկեթ դէմ Նինուէի հան զիւր զէն ,
«Մինչ նշմարեաց թէ յՆսորեաց ումակէտ պահանջք յաճախեն ,
«Դիմեաց զօրօք յՆսորեստան , սասանեցոյց ղնինուէ ,
«Դարձոյց դաւարն ի հայրենիս՝ հանգոյն հարկաց յեղօրէ :

«Նաև Պարէտ հարկադրեցաւ կրկնել անդ զիւր արշաւան ,
«Մինչ Միջաղետք ի շփոթ Հայոց ատելութեամբ խառնեցան :
«Ելոյծ Նինուէ զինուութեան վրբէժ տըրովք և հարկօք ,
«Գլխահար էր հայրենին մեր նեղչաց իւրոց՝ կազմ զնդօք :

«Մինչ Ամինթէս զանուր Հայոց մերժեաց յաւուրս Հայկակայ ,
«Ի նահտակետ մեր փայլեցան փառք Արամայ և Հայկայ ,
«Կշիռ ղինուն դատակնքեաց յևս մեծադոյն անձկութիւն ,
«Յանլոյծ ի լուծ արկ ղևմինթէս ի դոռ մարտին պարտութիւն :

«Նոյնպէս յորժամ Բելոքոսի յաջողեցաւ մարտ վերջին ,
«Յորում Հայկակ նիզակահար անկաւ խոցեալ ի դետին ,
«Զիա՞րդ յաջորդ առաքինւոյն զաթու և դահ Բելոքեան ,
«Ի վրէժ մահու նահապետին՝ յոդիս արար ապասաան :

«Քայց չիք այնպէս մարտ՝ որում ո՛չ զհետ դայցէ հաշտութիւն ,
«Հայք պատրաստ են յետ յաղթութեան յայտնել զանսուտ դթութիւն ,
«Առիւծասիրտ՝ տեսեալ յաղերս զիջեալ զոռոզ զատելին ,
«Անտես առնէ զանձին վըրէժ , և զսուր դընէ ի դետին :

«Յիւրաքանչիւր խաղաղութեան՝ զոր յաղթութիւն տայր քաջաց ,
«Յառնէր ի սիրտ յաղթականին և յիշատակ երախտեաց .
«Պայմանք դաշանց միշա հիմնէին ի Նինուասայն ուխտ հաստատ ,
«Երդմունք քաղեալք ի Դերկէթայ՝ կան յնսորիս անընդհատ :

«Արքայն շէ արդ պատճառ տուեալ ընդդէմ նորա սուր հանել ,
«Յելս իմ ի դահ ձօնեաց ուղերձ շինքը զոհարաց արկանել ,
«Զի՞նչ շարժառ իթք առ պատերազմ , մինչ դաշինք մեր շեն խախտեալ ,
«Սարդանալաղ կայ յաթոռ իւր , և շէ զինոք ձեր պարտեալ :

Քստմնափուշ հարան քրտունք Կիաքսարայ ընդ երես ,
Թախիծք յայտնի ծածկեցին զղէմս՝ Հայկազնէի ի բանէս ,
Ասէ՝ «Տիրո՞ջ Հիւսիսայնոց՝ յի՞նչ միել ձեռն արդ կամիս ,
«Կամ ի՞ւ վախճան դընել մարտիս ի քում սրտի խորհիցիս :

«Ասքանազեան զունդք քո դօրաց՝ որք կան զարդիս յերկրիս մեր ,
«Են մեզ սերունդք համազգակիցք՝ աւարակիցք և ընկեր ,
«Քեզ խոստանամք զարքայական ձօնել պատիւ և պըսակ ,
«Հանգւոյն այլոց թագառորաց կրել յապարոշդ փառաց թագ ,

— Անդրէն Պարոյր ետ պատասխան Կիաքսարայ առ այս բան ,
«Ինձ հաճոյ են՝ բանք շրթանց քոց՝ Աղղիդ Մարաց հաստարան ,
«Այլ նահապետք Հայկազնէից թագ յօտարաց ո՛չ առնուն ,
«Չեն ազդի մեր արքայական հաճոյ ո՛չ դահ ո՛չ անուն :

«Թէ ցանկալի ինչ լինէք թաղ՝ կարէք գարէտ զայն դընել,
«Մինչ հաճեցաւ Դշխոյն Շամբիկ միեսայ զնա անտանել,
«Քառարաժին բանակը զօրաց, որք ի նմանէ պարտեցան,
«Զնա թագի և ալբակաց ցուցին արդար և արժան :

«Եւ քաջարին Սուր նահապետ և այլ յետնորդք վեհաղին,
«Բաղմագիմի յաղթահակօք զանձանց հոչակ հաստեցին,
«Այլ հայրենի աւանդութեանց ոչ յօժարեալ քական ցանկ,
«Նախնեաց իւրեանց երեցան յաջորդ կոչման և ժառանդ :

«Ես ոչ խոտեմ զարքայական թաղ զոր դոք ինձ արդ ձօնէք,
«Բայց և զինիլ դէմ Նինու էի ոչ վաղվաղեմ՝ զոր ինդրէք,
«Ինձ նախ պարտ է զեսպանութեամբ զոք առ արքայ առաքել,
«Գուցէ ինքնին առ մեր ժամանս յօժարեսցի զիջանել :

— «Եւ մեք յօժար եմք առ քո բան, ետոն նմա պատասխան
«Առ Նինու էի արքայն փութով թող Ճեպեսցէ քո դեսպան,
«Այլ թէ դարձեալ Սարդանալաղ զտցի ի կամս իւր յամառ,
«Յետս նահանջիլ ի մեր ինդրոց շունիցին ինչ այլ պատճառ :

— «Եսիթք սակառք չեն առ հրաժեշտ՝ իմ մեծարոյ դաշնակիցք,
«Ինձ չէ հաճոյ՝ զի ի կորուստ որոք զտաք զինակիցք,
«Մեզ արժան էր զարքայն ողղել, ի վատ վարոց զեղխութեան,
«Եւ ոչ զաթոռն հաղարամնան Ճըդնիլ զընել ի կործան :

«Նախնիք՝ նախորդք իմ ի դաշիս՝ չեղեն բնաւ յայդ թեակոխ,
«Թէե բաղմիցս զսեամս Նինու էի արարեալ են սանակոխ,
«Մեք այժմ ասեմք թէ հարք նորա էին անձինք քաջարիք,
«Այլ ոյք էին քան զարքայս զայս առաքինիք և բարիք :

«Զինչ դործիցէ միահեծանն թագալրսակ ի դլուխ,
«Միթէ յաւէժ զէն ի ձեռին ունի հեղուղ զարեան ուխ,
«Ամենայնի կայ շափ և կշիռ, նա բնդ հօր իմ կռուեցաւ,
«Ես ևս կայի ի մարտին դու, թէ և անտի հասակաւ,

«Թէ յաճախէ ի դաշտ մարտի կոչեմք զնա կռուասէր ,
«Թէ յապարանս նստի անդորր՝ դրոշմենք անուամբ իպասէր ,
«Խաղաղութեամբ ծաղկի Նինուէ , իւր լայն սահմանք անդորր կան ,
«Ժողովուրդ իւր գոհ , երջանիկ , զի՞նչ առնիցէ այլ առքայն :

«Թագակալաց չէ ինչ արժան զինուք և եթ վեհ պանծալ ,
«Հանդերձեալ դարք չունին բընաւ զարդեացս դործոց գոհանալ ,
«Զի՞նչ են մեր ծէսը , զամառն ողջոյն զզօրս պահել յարշաւան ,
«Եւ հողիահար ելուղակօք զաշխարհ լընուլ ի ձմերան :

«Զի՞նչ դործեսցէ աղքատ զինուորք՝ որ ոչ ցանեաց ի գարնան ,
«Զամառն ողջոյն հան ի բացի՝ դարձաւ յիւր տուն վերջ յաշնան ,
«Եղիտ աւեր զկերդաստան , զիին տառապեալ ի քաղցէ ,
«Թէ ո՛չ զաջ իւր ի դողութիւն , զի՞նչ այլ առնել կարիցէ :

«Երկրագործ են , և կամ հովիւ բնակիչք մերոյ աշխարհի ,
«Չեռք նորա ո՞չ հրափին ի մաճ զերծեալ ի սրոյ սուսերի ,
«Աւարք չառնեն Ճոխ զերկրագործն , բերեալք յերկրէ թշնամեաց ,
«Ընդ փոյթ ցնդին ի ոինետունս և ո՞չ յասլուստ ընտանեաց :

«Ա՞յ այնմ ազդի զորսյ երկիր արօրադրէ անզօր կին ,
«Կամ զորոյ հօտս վարէ յարօտ՝ օրիորդ կոյս ի հովտին ,
«Ի բաց մերժի համեստութիւն , բռնակալէ բրտութիւն ,
«Մարդ ի զազան փոխակերպի , կամ յանբան իմն անասուն :

Լու և թախծեալ կան դաշնակիցք , ո՞չ զոյ ուրեք և շշնչիւն ,
Նմենեքեան բաղձան լսել զՊատանւոյն հաճութիւն ,
Եաես Պարոյր թէ տրտմեալ կան Ախաքսար և Բելիսի ,
Յօժարեցաւ համաձայնիլ այն Աւեհազնեայց հանդիսի :

Հրաման արար կոչել զԸմբակ ամրաց Տայոց Նահապետ ,
Ռւստի հանեն հեծելազօրք ձիս սօս , շլուռս և աշխէտ ,
Եւ բնակիչք Հայաստանի քաղցրանոյշ միրզս և զպտուղս ,
Զորս անդ պահել ուսեալ են քաջ , ի շտեմարանս և ի հիւղ :

Գընա՛ ասաց , մուտ առ արքայ , և ի դիմանց Վեհաղանց ,
Մատո՛ զողջոյն մեծարանաց , և ասասցես «Քաջդ արանց ,
«Ո՛չ ևս կարեն զքեզ տանիլ Ասորեստան և Նինուէ ,
«Հայցեմք ի քէն հըրաժարիլ յաշխարհէդ և ի զահէ ,

«Խոստանայ քեզ Պարոյը Հայկազն՝ տալ յերկրի իւր զկալուած ,
«Ուր արքունեօքդ կեցցես անկախ՝ մինչ կենաց քոյ ի սպառուած .
«Այլ թէ սկնդեալ յամառեսցիս ի պաշարման մըղել մարտ ,
«Ենշու շտ զկեանսդ և զքոյինսդ արկցես մահու ի թակարդ :

Լոեաց Պարոյը : Ընդ ելանել ի դիւանէն դեսպանին ,
Ետուն զողջոյն հըրաժարական՝ խորհրդականք՝ Հայկազնին ,
Պարոյը դարձաւ ի բանակ իւր , և եմուտ յիւր սաղաւար .
Եւ անդ հանդէս զօրավարաց քաջիկ զօրաց իւր արար :

Ի բանակի դաշնաւորաց լըրտեսք և դէտք չեն պակաս .
Ծըպտեալ բընակք քաղաքամօր ել մուտ առնեն անվընաս .
Ո՞ կարիցէ յանդիմանել զընտանի զողն կամ զաղան
Որ հայթայթէ զանձն ըսքողել յանլոյս ստուերն ի դարան :

Նինուէացի ոք կայր ի խոան ծածկեալ ի պար ստրկաց ,
Մինչ խօսէին Կիաքսարայ ի խորանին պէտք ազդաց ,
Եւ ի ցրուել ակմբելոց՝ աճապարեաց 'ի Նինուէ ,
Սարդանապաղ կանուխ ծանեաւ զատենին անցս ի սմանէ :

Էր ընդ երեկս մինչ հաս Ամբակ ի մի ի դրանց Նինուէի ,
Ի ձայն փողոյ զանձնէ նըշան պահապանաց ետ խմբի ,
Սարդանապաղ եհան հըրաման , բացաւ կոնակ առ զըրան ,
Էանց Ամբակ ընդ բուրդն ամուր՝ կալ արքայի յանդիման :

Ընդ պատուհանս ապարանից զեղանէր լոյս Ճրբադաց ,
Փայլէր Ճաճանչ յորդոստային՝ ի խուժանին բընակչաց .
Ճըջին զինուորք ընդ սոսկականս , յարանց կանանց ի խըռան ,
Հետաքրքիր է անցնիւր անձն՝ զիտել թէ էր եկն դեսպան :

Ի դահլըճի բաղմէր արքայն յոսկիաձոյլ աթոռ իւր,
Խորդ ոսկեկար ի փղոսկերեայ տախտապարին ծաւալիւր,
Բարձք զառնաւուխտ զորմովք արկեալ վասն աւագաց Նինուէի,
Ամենեքին նստին անշարժ՝ յառեալ ի փառո արքայի :

Ներքինեաց պարք յայլ սենեկի, հարձք և տիկնայք ըսքողեալ,
Զհետ աթոռոյ ոսկեճամուկ վարագուրօք անջատեալ,
Գաղտ հեծութիւն յամենեախն միայն արքայ կայ անհող,
Ի դէմս նորա դծաղրեալ է յամառութիւն անողոք :

Յիշեաց Ամբակ զայն մեծ դահլիճ ուր ողորէր մերթ Դերկեթ,
Ընդ օրհասին՝ յազատագրել զԱնու շավան նահապետ.
Եւ ուր Պարէտ վեհանձնութեան առ աղզ մարդկան ՚ի տրիտոր,
Սըրէր յանդէտս դէմ իւր կծնաց՝ դարանամտին խարդախս սուր :

Զլուութիւն եցել զքող՝ Սարդանապաղ շեշտակի,
Մինչ ի դահլիճ մուծաւ Ամբակ՝ և երկիրպաղ արքայի.
Ասէ՝ «Դեսպանդ իմոյ ստրկի՝ կողմնակալին Պարոյրայ,
«Որ արդ դաշամբք յարեցաւ յուխտ Կիաքսարայ, Բելեսայ :

«Խօսեաց՝ զի լուայց տեառն քո զբան, արդեօք ունի՞ յիւր ուշի
«Զերդումն զոր ետ Անուշավան՝ մինչ առ դրան մեր կայր զերի.
«Յաւուր յորում՝ Նինուասն մեծ՝ զաթոռն դարձոյց ի Նինուէ,
«Ասա, Պարոյր արբանեակն իմ աստ ի մարտի յոր կողմն է :

Սքանչանայր դեսպանն Հայոց՝ ընդ Ճոխութիւն արքոնեաց,
Ընդ շուք դահլին, ապարանից, ընդ արքային յօրինուած,
Զինչ գեղ տեսլեան փաղփիւն զարդոց, զինչ տիպ չքնաղ և շրքեղ,
Զինչ քաղցը լեզու պերճ և ճարպիկ, զինչ բարբառոյն ձայն ահեղ :

Ընդ միտս ասէր՝ մինչ նա խօսէր «Ո՞ տայր սրմա վեհ հողի,
«Զի անտըխեղծ մարմնոյն կերտուած ո՛չ լըքտնէր ամայի.
«Ներքինն մարդ պճնէր զարդուք՝ ըստ արտաքնոյն ալերճութեան,
«Եւ ո՛չ մընայր մերկ կողոպուտ ի զդայութեանց արդելան :

«Երեի թէ իւր մանկո թիւն զեղծեալ յեղեռն և յոջիր .
«Զէ յեսանեալ , այլ ժանդահար՝ զանցելոց տայ տիալ զազիր .
«Այնպէս շինուածք գոն վաղնջուց՝ չքնաղաղեղ արտաքուստ ,
«Ոստայնք սարդից պատեալ զորմովք՝ փոշեծածուկիք ի ներքուստ :

«Եւ երանի՝ թէ ամայի միայն իցեն ապարանք .
«Գիշերահաւք , ջղջիկք , բուեճք , օճք շարաշունչք և դազանք ,
«Բազում անդամ տիրեն յարկաց՝ որք ցանկալի են մարդկան ,
«Բաղեղք մամուռք պատեն զորթովք , և թոյն թաքչի ի ծաղկան :

«Ո՛չ այսպէս է մեր քաջազդին , ո՛չ է այսպէս , ի բաց տար .
«Ընթանալ միշտ ընդ պողոտայն առաքինեաց է յօժար .
«Ունէր ինքեան դաստիարակ զԱկայորդին քաջարի ,
«Ցարդ ո՛չ շեղեաց յաջ կամ յահեակ յայն կուռ ուղւոյն ծընողի :

«Զիա՞րդ ջանայր առաքինին սերմն բարի սերմանել ,
«Սերմն բազմարդիւն յորդւոյն ի սիրտ՝ իւր անդրանկին արկանել .
«Եւ առտընին , եւ ի դաշտին , եւ ի զբուանս դարպասին՝
«Հանդէպ աշաց ունէր զորդին՝ խրբառ բարի տալ նըմին :

«Ինձ աւելի մեծ ինչ թուի՝ զորդիս կրթել ի բարի ,
«Քան զահ թողուլ ի ժառանգել , կամ զանձ անհ ուն մըթերի ,
«Զինչ լինէր մեզ՝ թէ Սկայորդի թողոյր ժառանդ զայր վատթար ,
«Ո՞ կազդուրէր ի տան նորա զաթոռ ազգի այս պայծառ :

«Ցետ որոյ մահ զԱօսանուէր երարձ յերկրէ անժառանդ ,
«Քանիցս զաթոռն հափափեցին խարդաւանողք անարժանք ,
«Այլ պահեցին զայն յազգ իւրեանց : Ո՛չ : Մոռացան՝ թէ որդիք
«Բազում անդամ կործանեն՝ զոր հիմնեն ճգամբք քաշ նախնիք :

«Սկայորդի՝ Նիւտիրը կոչեալ եղեւ երկրիս նահապետ ,
«Հետամուտ եր զործոց բարեաց , մրտօք ուշիմ , խորազէտ ,
«Ծերք ազգի մեր ետուն նրմա զաթոռն արդէն խարիսարեալ ,
«Կա նորողեաց , և յեանորդաց հաստաբեստեալ ըղձայր տալ :

«Ասէր արին . չէ այն աթոռ՝ յոր բռնագոյնն բազմեսցի ,
«Կամ մըցանակ արիւնաներկ բաղդայուղից ձօնեսցի .
«Թէ որդեակն իմ չիցէ արժան՝ յաթոռ ծնողիս մի՛ ելցէ ,
«Թողդահ նախնեաց զառաքինիս ժառանդաւոր ընտրեսցէ :

«Կա զորդին իւր հըրահանգեալ՝ յանձնեաց ի կամս իւր ազգին ,
«Որպէս ընծայ բոլորապառող երախայրեաց ձիր նախկին ,
«Աարոյր քաջ է՝ առաքինի , առաքինի հօր զաւակ ,
«Երջանիկ է արդէն մեր ազդ , և ի Պարոյր իւր պարծանք :

«Հարժեաց զշրթունս՝ մինչընդ մէջ հատ Սարդանապաղթել բանին ,
«Արքայ՝ ողջ լեր , կեաց յաւ իտեան , ասաց Ամբակ յատենին ,
«Պարոյր տիրող աղդաց աղանց և նահապետ Հիւսիսոյ ,
«Ի սալ մատաց խորաքանդակ պահէ զյարդանս Տեառնդ մերոյ :

«Զշինգդ ականց զոր ձօնեցեր՝ կրէ միշտ յանձին փառացի ,
«Հաւատարիմ է արքայիդ և զաշնակից նինուէ ի ,
«Թէ պէտ մեռաւ Անուշավան՝ չեթող զահին ուստր յաջորդ ,
«Այն նահապետք ընդ աթոռոյն են քոց շնորհաց ժառանդորդ :

«Պատերազմոնք զոր մղեցին ընդ արքայից ազգ Հայոց ,
«Երաշխաւորք անկախութեան եղեն անձանց և յետնոց .
«Որ ստրուկն էր յաւուրս ձախորդս՝ պատրամս բաշխեաց յապակայա ,
«Գերին առ դրան յաջողակին՝ արար զերի զգլիսահարս :

«Հրջան շարժոն ժամանակի՝ դինչ թող ի կայս հաստատուն ,
«Քանի աթոռք անկան կործան , արքայք զըտին գերութիւն ,
«Եւ ազդք անկիրթք և վայրենիք տիրապետեալ աշխարհաց ,
«Ի լուծ անլոյծ կապեալ զաղինս՝ հարուած եղեն հայրենեաց :

«Քուեայք բաղդին չեն ի մեր ձեռս , Ճակատաղըին է ուղղել ,
«Զելից իրաց կըշիռ յաջող՝ ընդ ձախորդին մաքառել .
«Քաջաղունից զիպեալ քաջաց՝ բըռնի քարշեն ի մըղօն ,
«Ո՛չ դիցէ սանձ կամաց բազմաց առանձնակի կամք միոյն :

Որոտաղին ճշեաց առ իւծն , մոնչին իւր սոսկալի ,
Ընդ կամարօք վերնայարկին հեռի լինէր լրսելի .
Ասէ՝ «Թէ ո՛չ դեսպանութեան էր քո սրաշտօն՝ քեզ պաշտպան ,
«Կարկէր յառէժ ի խօսելոյ՝ ապերասան քո բերան :

«Գիտեմ՝ թէ զի՞նչ կամիս ասել , չէ իմ անձին այն հաճոյ ,
«Վստահ եմ յոյժ յանխար նըպաստ բաղկին իմոյ այս աջոյ ,
«Մերկեալ ոնիմ սուրն իմ ահեղ , և ո՛չ դարձցի յիւր պատեան ,
«Մինչ ո՛չ եղջիւր խորտակեսցի ապստամբից խեռութեան :

«Բայց սուր իմ չէ ընդդէմ իմոց արբանեկաց յեսանեալ ,
«Ճառ է նոցա մարզից հարուած կամ խարազան ոլորեալ ,
«Ո՛չ կիաքսար , ո՛չ բելեսի և ո՛չ Պարոյր են արժան ,
«Զի սուր հանից ընդդէմ նոցա՝ սուր նախնեաց իմ արութեան :

«Վաղիւ յայս ժամ երեցունց այնց , և քեզ Ամբակ ընդ նոսին :
«Գահ փայտակերտ հանդերձեսցի ի միջակէտ Նինուէի ,
«Աւարք Մարաց , Բարիլացւոց , չնչին զէնք քոց համազղեաց ,
«ԶԱՍՈՐԵՍՏՈՒՆ Ճոխացուսցին գընովք անհուն վաճառաց :

«Բարելացիք և Մարք և Հայք ի ստրկութեան վաճառեալ ,
«Ընդ չորիս հողմն տարածեսցին յերկրէ իւրեանց վըտարեալ ,
«Ազգք եկամուտ յաշիարհ նոցա անդորր հանդիսատ սերեսցին ,
«Կանայք նոցա և օրիորդք ի հարձութիւն հարկեսցին :

Հատաւ ընդ մէջ բան ՚ի շրթանց , այլ աչք և յօնք հուր ցայտեն ,
Ծառայակերպ աւագորեարն յահէն սարսեալ սարսափեն .
Այսպէս հնչիւն հիւսիս հողմով մըրկածին փոթորկի ,
Զհոտ խաշանց ցնդեալ ցրուէ յԱրարատեան ի դաշտի :

Մինչ հասանէ ի ձինասլատ դադաթ լերին Լուբարայ .
Առնու զկայ ուժդին յուղմանց տկարացեալ թուլանայ ,
Ամբակ որպէս հազարամեան արմատացեալ ծեր կաղնի ,
Զինքնակալին ուժդին բոհմանց հանգուրժելով դէմ ունի :

Ապա կալեալ զծայր բանին՝ որ արքային էր թողեալ,
Կրկնէ «ԱՌՔԱՅ՝ քեզ քաղցրասցին բանք պատկամաց ուղերձեալ,
«Մի զիս պաշտօն դեսպանութեան պաշտպանեսցէ յատենիս,
«Մի հըզօրիդ ծանրասցին սիրու առ անզօր ձայն ծառայիս :

«Թէ անողոք ճակատագիր քեզ հանդերձէ զայլ վախճան,
«Ո՛չ կարէ ոք դիմազրաւել, դատակնքոյն է սահման,
«Այլ թէ երբէք հարազատից սիրոք և հոգիք են պիտոյ,
«Սիրու տեառն իմոյ զորովալիր լիցի վեհիդ ձօն հաճոյ :

«Քո է՝ ԱՐՔԱՅ՝ Հայաստանեայց ծաղ և նորին լըրութիւն,
«Ի կամս տեառն կայ ապաստան անքոյթ վայրաց ընտրութիւն,
«Ուր և իցես՝ դու ես արքայ, ընդ քեզ և քո արքունիք,
«Հաճեաց յամուրս մեր աշխարհի, քե կեցցեն քո սիրելիք :


Ժըպիտ յերես սըրտմանելոյն, զայրոյթ անշէջ ի սրտին,
Ասէ «Ամբակ՝ մի յաճախեր զտաղտուկ ժըպիրհ քո բանին.
«Դարձ ի բանակ ապստամբից և պատմեսցես անվեհեր,
«Թէ ի վաղիւ տեսցեն ըմբոստք զիս՝ որպէս արդ դու տեսեր :


«Բայց ո՞չ որպէս դու կացեր այժմ՝ կացցեն նոքա առաջի,
«Ի ձեռնակապս և յոտնակապս կողկողեսցին ի խըշտի,
«Կանայք և հարճք և ներքինիք, զորս միշտ ի դէմս իմ ածեն,
«Թուք արձակեալ յերես նոցա ի կախաղան ողղեսցեն :

«Եսա դի մարտ պատերազմի վաղիւ վաղ քաջ խմբեսցի,
«Խուժան շնչին ամստամբից յերկրէդ ի բաց ջնջեսցի,
«Բարելացիք և Մարք և Հայքդ զերես դաշտաց ծածկեսցեն,
«Թուշունք, զաղանք անապատի զդիս նոցին լափեսցեն :

«Այլ թէ երբէք յաջողեսցի ապստամբիցդ ինձ յաղթել,
«Եւ զնինուէ մայր քաղաքաց զինուք բոնի նըւաճել,
Պատրաստեալ կան յապարանս իմ լուցկիք հըրոյ խարուկին,
«Ուր դանձք և հարճք և տիկնայք իմ ինե հանդերձ այրեսցին :

«Բայց ո՞չ կարծեմ։ Դաքիրային՝ յաւանդութեանց անսուտ բան,
 «Զիս ո՞չ երբէք կարեն պատրել կամ արկանել յերկեան,
 «Մինչ ո՞չ զեղցի դետն Տիգրիս՝ ի սիրտ մեծին Նինուէի,
 «Ոչ յաղթեսցէ հակառակորդ, ո՞չ մտցէ անդ թշնամի։





Գիշերավարն կանխեալ զցայո՛ցուայր յերկնից խորանի ,
Եւ քաղցրաշունչ սփոգք զովարք զօդ զըտէին ի պարզի ,
Ամպք լուսակիր հովահարեալ անօսր ցնդին ցիրուցան
Ի կապուտակս վճիտ լապտերք շողշողէին ի մըթան :

Ոչ ոք շրջի յայն լայն դաշտի : Միայն ռմբակ դառնայ յետս ,
Ի քաղաքէն ելեալ ուղղէր գէալ ի բանակ զիւր զհետս
Եւ յարքունիս ինքնակալին տարածանի լրութիւն ,
Որպէս յերեկն էր և յեռանդն զիշերաբեր խըլութիւն :

Այլ ո՞ է այս՝ որ զողուդի ընդ բազմութիւն սըրահից ,
Առաջնորդեալ ի նաժըշտէ ուղղէ զհետս ընթացից ,
Յաղամըզի անլոյս մըթան յուշիկ գնացիք ի սենեակ ,
Եմուտ , եկաց ի խաւարի , և սպասէր միայնակ :

Աչա մերձի առ նա ըստուեր՝ խարխափելով որմ զորմայն ,
Եղիտ զնա և զկայ էառ , և շշնչիւն զաղտնաձայն :
«Դու ես լրտեսն համբաւաբեր զաշնառ որաց բանակի ,
— «Այս՝ ես եմ , որ քան զըմբակ յառաջեցի և եկի :

— «Դու զՊարոյր , և զկիարսար , և զբելեսի ձանաշես ,
— «Այս՝ զնոսա՝ մինչ նստէին ի խորանի՝ տեսի ես :
— «Ուստի ծանեալ՝ թէ Կիաքսար՝ չէ բելեսի , կամ Պարոյր :
— «Մինչ Պարոյր եկն՝ երկու արքայք ետուն նմա զհամբոյր

— «Ո՞րպիսի ոք՝ է Կիաքսար, ստորագրեա՞ թէ դիտես,
— «Կարձահասակ, մարմնով վտիտ, և թխամորթ, փոքրերես :
— «Բելեսի զի՞նչ տիպար ունի, կամ զի՞նչ նորին կերպարան,
— «Մեծադըլուխ և մեծափոր, անձեւ մարմինն և իրան :

— «Քանի՞ ամեայ իցէ Պարոյր, կամ ում ի ձենջ նըմանի :
— «Պարոյր տիովք դեռ է մատաղ՝ դիւցազնական պատանի,
«Ո՛չ ի Նինուէ և ո՛չ այլուր նման նորա զոք դիտեմ,
«Այլ դտիպար տեսլեան նորա և յայս մթան քաջ յիշեմ :

«Ըսպիտակ է մարմին նորա, վարդակարմիր են այտք իւր,
«Մինչ նա խօսէր յակումք քաջաց՝ Աստուածորդի երեխուր,
«Հսկայաձեւ չքնաղիրան, և թովչարար իւր դիտակ,
«Տեսիլ նորա արփիափայլ՝ զուարթերես անքատակ :

«Աչք իւր և յօնք են թուխ և սեաւ, արտեանունք բոցափայլ,
«Ընչայք մօրուսք են աղուամաղ, զընացք իւր սէգ, ծանրաբայլ,
«Բարբառն աչեղ բայց ո՛չ հաղձեալ, և հրամանք իւր են կշռած,
«Ակնարկութիւնքն անդառնալի՝ նըշան հըզօր են կամաց :

«Տեսի զնա և աշտանակեալ ի նժոյդ իւր սօս՝ ըսպիտակ,
«Ի մէջ բիւրուց իրրե զոհար փայլէր անձամք բովանդակ :
«Զօրավարք Մարք և զօրապետք Բաբելացւոց քաջարիք,
«Հանդէալ նորա վատթարանան զերթ անհրահանգ զըռեհիկ :

«Մինչ մըրայօն աչք իւր թեքին՝ սարսուռ ոնի զամենայն,
«Եւ սըրտապինդ արիութիւնն է դէմ նորա ընդունայն,
«Ի բոցատիպ հայեցուածոց շանթիկք թուշին հըրատից,
«Կայծակնածին արտեանունք, բիբք են սըլաքք՝ սայրք նետից :

«Այլ գուն ուրեք խոժոռադէմ զնա ոք կարէ տեսանել,
«Զքաղցրագին տեսիլ նորա ոչ ինչ կարէ սուզանել,
«Ի բարկութեան՝ ծիծաղագէմ, ժըսիտք սքողեն զտրտմութիւն,
«Ո՛չ խրթնին յօնք սըտմըտութեամք, ցաւք երեին խնդութիւն :

Կրկնեաց ըստուերն «Սարդանապաղ չէ քան զնա գեղաւոր,
—«Արքայն ի մէջ իւր ծառայից՝ է արդար և փառաւոր,
«Այլ թէ Պարոյր կացցէ հանդէպ, քողարկեսցէ զարքայն մեր,
«Փաղփիւն փառաց և Ճոխութեան անհետ լիցի զետ ըստուեր:

—«Դու կարե՞ս ինձ առաջնորդել առ Պարոյրայն տաղաւար,
—«Այն՝ կարեմ, զայն ո՛չ զօրէ ծածկել յաչացս մութ խաւար,
«Նիզակ ոսկի ի վեր ունի զոսկենը կար աղաւնիս,
«Որք ընդ սահանս շիւղ ի բերան թեապարեն ի Մասիս:

«Խորան նորա ի ծաղկազարդ յայն կառուցաւ ի բլրին,
«Ուր հովանոցք յաճախ կերտին ի զրօսանս արքային,
«Որ մինչ իւրովք ի դաշտավայրս ելանէ պարզ զօդ ծըծել,
«Եւ աղաւնիք Շամիրամայ վերամբառնան ծածանել:

«Այլ արդ կառչի անդ տաղաւար չքնաղազեղ Պարոյրայ,
«Ոսկենը կար ծիրանափայլ կերպասք ծածկոյթ են նորա,
«Զայն ոսկեման բեհեղ չքնաղ օրիորդաց նիտայ պար,
«Զոր ի դաշտի տուարածական մի մի քաղէ ընտրաշար,

«Ծեղ նրբաթել է ծաղկածին՝ զոր յարեւու աղազեն,
«Քնքուշ մատամբք կոյսք աչազեղ մատիտեղաւ որոշեն,
«Հանդոյն առու և բամբակի յիլ ոլորեն ի մանոց,
«Եւ առ կակղել զայն քրտնոռօք՝ զամառն ողջոյն կրեն ի ծոց:

«Նոյն հովուհիք հանդոյն մեղուաց ծառալ սփոեալ ի հովտին,
«Մինչ յօտք զառանց ի տօթածամս ի զով զայոին ի ղետին,
«Յորդան կարմրոց յորս համակեալ յամանս աման զինելից,
«Զի որք կարմիր ունին գունիլ զաշն կափուսցեն բերկրալից:

«Աստի առնուն զոյն երփնաղեղ զեր քան զծովուն ծիրանի,
«Եւ համախումբ ոստայնանկեն պաստառ ի սկէտս խորանի,
«Օրիորդաց սէր տաւաղեալ ի տաղաւար հիւսուածոյ,
«Ընդ ամենայն անկիւնս շնչէ անոյշ բուրումն սուրբ սիրոյ:

«Ի վլրան անդ եմուտ Պարոյր զերթ Արամազդ յիւր տաճար,
«Մինչ համովեաց զաշնակիցս լեզուն քաղցրիկ և ճարտար,
«Յաշտարակաց մեր քաղաքի պարզ երեխ ոյն խորան,
«Մինչ լոյս արփոյ օժանդակէ աշաց սրաբիք տեսութեան :

— «Ած զիս ուրեմն յայն տաղաւար՝ որ ուրտանի արդ Պարոյր,
«Ճանկամ շրթամբքս յայտից մերժել Կիաքսարայն զհամբոյր,
«Թէ զօրավիկ ինձ եղիցին կանդնել՝ Գիք զիմ յաղթանակ,
«Առցես պարզե քաղաք հըզօր՝ երախտեաց քոց փոխանակ :

Անցին ըստուերք ընդ բազմութիւն Լայնատարած սըրահից,
Ուր լսելի լինին և եթ շըռինդք զինուց զըրահից,
Սպառազէն դունդք անձնապահ զետնախրշի պառակեր,
Անցուցանել անդորր ի քուն բազմացնոր զայն դիշեր :

Ե սենեկի առանձնութեան Սարդանապաղ կայր յոտին,
Գոհարազարդ սուր դաշնակին ահեղ փայլէր ի զօտին,
Զըդէր զանձամբ զանդընդելին զըրահ իբր ի մարտին զոռ
Վառեալ կազմեալ սպառազէն լուռ լուռ բազմէր յիւր աթոռ :

Ահա երկու գաղտնի ըստուերք մերձենային ի սենեակ
Յուշիկ բանայր դուռն աննշմար մուտ օրիորդ առանձնակ,
Մերձի առ դահ ինքնակալին : Խօսի արքայն ընդ դստեր,
«Զքնաղադեղ իմ Աստարտիկ՝ ընդէ՞ր այդքան յամեցեր :

Անզուգատիպ այն օրիորդ ետ ծընողին պատասխան,
«Ընդ լրտեսին կայի ի խօսս՝ յաղջամբզի ի մըթան,
«Ամենայն ինչ է քաջաղէպ, Ճեպել և եթ մընայ արդ,
«Մինչ տարածէ լիալուսին զիշեր մեղ զիւր լոյս զուարթ :

— «Շտապելով հազիւ կարեմք՝ զստրիկ՝ զործ ինչ վլճարել,
«Պարոյր զդօն կալցէ յանձին՝ զաղերս կուսիդ կատարել,
«Միակին է ազդ Հայկական : Պարոյր սիրէ զամուսին,
«Եւ Նոնոփար կայ բռնացեալ կենակցի իւր ի սըրտին :

— «Փութա՝ Հայրիկ՝ ելցուք ի դաշտ, խօսիլ մարթէ յերթալ մեր,
«Աջապարել է արդ արժան, զի ոչ մրնայ մեղ զիշեր,
«Փորձ փորձեսցուք որսալ զքաջն, սէր իմ լիցի օժանդակ,
«Միթէ վէմ է սիրտ Դիւցազին՝ կամակոր, հեռ անազդակ:

Ել Աստարտէ ի սենեկէն, Սարդանապաղ ընդ նըմին,
Հեծեալք հազար սպարազէն կան առ դըրամբք քաղաքին,
Բացաւ դռնակն, և ել արքայն, իւր համախումբ հազարաւ,
Եւ օրիորդն ընդ լրտեսին զանձն իւր ծածկէր ասպարաւ,

Ասաց դստրիկն յիշես՝ Հայրիկ զայս դռնակ մեր պարսպի,
«Ընդ այս Շահմար ելմուտ առնել յաջողեաց ընդ Սինթայի,
«Յայնժամ միայն յաղթակիր զօրք Հայոց էին զումարեալ,
«Նինուէ ի խորս կորստական սովամահին էր զլորեալ:

— «Ի Պարետէ զի՞նչ խնդրէին, և մեք այսօր զինչ խնդրեմք,
«Ո՛չ կարկառումն աստուճ հացի, այլ զնոյն Պարոյր որոնեմք,
«Ենձ ցանկալի էր տեսանել՝ թէ իմ պատղամք առ դեսպան,
«Զի՞նչ արդասիս յառաջ ածցեն ի սիրտ քաջին Սկայորդեան:

Բուռն եհար կոյսն Աստարտէ զթելոյն բանից հօր իւրոյ,
Ասաց՝ «Պատգամք Քաջիդ արանց չէին հրաւէր ինչ սիրոյ,
«Չէր իսկ արժան ընդ դեսպանին այնպէս խօսիլ լի ցասմամբ,
«Դեսպան անձնէ կրաւորական, ունի լըսել լըռութեամբ:

— «Արդար են բանքդ դստրիկ Դշխոյ, դործք իմ էին արմարդի:
«Պարտ էր զդեսպանն սիրով դրաւել՝ զի սէր կրէր ի սըրտի,
«Աստահ էի յիմ դաշնակիցս, այլ վրէալ զըտայ ի յուսոյ,
«Ո՛չ այնքան փոյթ են յօդնել ինձ, յիս նոր շողաց կայծ լուսոյ:

Սարդանապաղ և Աստարտէ արագէին ի դաշտին,
Փուշախպան զօրք ըստ Աստարտեայ ակնարկութեանց դարանին,
Յուսայր Դշխոյն ի Դաշնակցաց կորզել զՊարոյր ի ծոց իւր,
Սէր Պարոյրայ ի հայրենեաց սիրոյն յաւէտ բորբոքիւր:

Երբորդ ամ էր զի Աստարտե Հարեալ ի զեղ Պարոյրայ ,
Զցայդ և ցերեկ սրտին ի խորս պահէր զանդուլ սէր նորա ,
Եւ մինչ հռչակ ծանոյց նմա թէ Հասեալ է ի բանակ ,
Ծնողին ի բուժ մերկեաց զոգւոյն սիրոյն զաղանեաց զպատրուակ :

Զառաջինն Սարդանապաղ սրտմըաեցաւ բարկութեամբ :
Զօրիորդին սէր առ Պարոյր մերժէր քեցէր Հեղնութեամբ ,
Այլ մինչ յիշեաց զի այն մարթի քական զշաղկապ դաշնակցաց
Յօժարեցաւ զհետ երթալ զաւակին իւր բաղձանաց :

Գալ Պարոյրայ ի բանակ անդր և առաքելն զղեսպան ,
Եղե Հապճեալ , և արքային խորհուրդք անկան ի կործան ,
Սարդանապաղ չեղե ձեռնհաս վարագուրել զիւր ցատումն ,
Բան Ամբակայ հան ի սրտէն և զառկայծեալն ամոքումն :

Այլ մինչ Ամբակ ել դժգմեալ նախատակոծ յարքայէ ,
Եմուտ թախծեալ աղիողորմ սուզ ի բերան Աստարտէ ,
Յիշեաց արքայ զիւր վրբիպակ , և զղջացաւ տարածամ ,
Առ նահանջել զայն մեծ վըանդ ոչ զոյր հնար ինչ և ոչ ճամ ,

Դարձուցանել զԱմբակ յուղւոյն վարկաւ անձին անարժան ,
Այլ հեկեկանք միամօրին ի զորովանս զօրացան :
Ասաց՝ «Դստրիկ բերար ի զոհ զուր բոնութեան իմ կըրից ,
Ցոյց ինձ հնար , զամենայն ինչ ըստ կամաց քոց արարից ,

Ետ Աստարտէ պատասխանի , «Անկայց Հայոց ի բանակ ,
Ի ժամանել ինձ առ Պարոյր զտցի լրտեսն օժանդակ ,
Սարդանապաղ ասաց «Եւ ես եկից ընդ քեզ յայն ուղի ,
«Քրե զմին յանձնապահացդ՝ զի մի վըտանդ ինչ լիցի :

Արդէն երթան արշաւասոյր , և օրիորդն Հարցանէր ,
«Զիանդ լինէր՝ եթէ Գեսպանն ի զաշտի աստ վըտանէր ,
«Գուն զործէաք ամոք բանիոք զսիրտ նորա Համոզել ,
«Քաղցրասիրտ Հայն փոյթ յօժարէր ի Հաշտութիւն զիջանել ,

Սարդանապաղեա պատասխան «Փոյթ չեն ինձ բանք Դեսպանին ,
«Դու առ Պարոյր խնդրեա զմուտ , զսիրտ գրաւել և զողին ,
«Առանց նորա ո՛չ Կիաքսար , ո՛չ Բելեսի են ահեղ ,
«Ի հողի իմ շարժէ զերկիւղ այն պատանի հանձարեղ :

«Ծանօթ էր ինձ Սկայորդի , և մըտերիմ դաշնակից ,
«Կամք եղեն ինձ զդուստը նորա ունիլ ի պար իմ հարձից ,
«Այլ նա չարար ըստ իմ ըղձի , զօրք իմ զեղան յայն երկիր ,
«Զնինուէի քաջ այրուձին ետես մեր իւր Արմաւիր :

«Այլ չեղե մեզ հընար և ո՛չ առ անզամ մի նետ լարել ,
«ՅԱրմաւիրայ ընդ չորեսին դրունսն ելին զմեղ վարել ,
«Սուսերամերի յարձակեցան Հայք ի բանակ մեր զօրաց ,
«Դիակամբք մեր փոյթ ծածկեցան երեսք և դաշտաց հովտաց :

«Դեռ մանուկ էր և Պարոյրդ այդ , այլ Խիզախէր առաջին ,
«Ճանթառաք իւր հարուածք ահեղ ի մարտին խռան մոլեղնին ,
«Յոր կողմ ուղղէր զիւր երկսայրի , փողոցք ի զունդս լայնանան ,
«Մահ կարապետ էր սկատանւոյն , յաղթանակք զհետ ընթանան :

«Կորաքամակ դարձաք պարտեալք , Հայք հետապինդ յետուստ մեր ,
«Երիվար իմ օդապարիկ զիս Ճողովրել շատակէր ,
«Խիզախ մանուկն դիսազնածին զթիկնամէջ իմ խոցեաց ,
«Առուն արեան վիժեալ ի վայր՝ զթամբ և նըժոյդ մկրտեաց :

Մինչ զայս պատմէր Սարդանապաղ Սատարտէ լուռ լայր զանխուլ
եւ զծնողին խրատ հայրախնամ կրկնէր ըստէպ և անդուլ ,
«Դու առ Պարոյր խնդրեա զմուտ՝ զսիրտ գրաւել և զողին ,
«Ի կազդուրել զիւր զահ զսէ զամբիծ անուն զաւակին :

«Գուցէ հայր՝ զիս համարիցիս հանդոյն միոյ ի հարձից ,
«Որք ժողովին իրր ընտրանօք ի մոթ անկեանց և խորշից ,
«Կամ վարկցիս զիս կաթն ի ստեանց անսպարկեշտից ճաշակեալ ,
«Զի չես երբէք ի փափկութիւնս սննդեան իմում միտ եղեալ :

Ո՛չ իմ Հայրիկ, ես ո՛չ երթամ կամաւ լինիլ անձնամատն,
Աստուածուհի իմ չէ Աստղիկ, այլ Անահիտ վարդամատն,
Առ ի՞նչ է իմ դշխոյ անուն՝ պարկեշտութեան վարդ խոտեալ,
Թէ Նինուէի կայ կործանիլ՝ մեռայց ի հուր խարուկեալ,

Գուցէ բոցոյն սատան զտցի ինչ՝ զիմ զիակ կիզանել,
Եւ կարեկից յաջողեսցէ յաւերակաց զիս հանել,
Զի՞նչ յիշատակ անարդութեան կացցէ յարձանս աշխարհի՝
Մինչ զիմ զտցեն վարդ կուսական թօշնեալ անդ ի պարտիզի:

Իսկ մինչ լռեաց Սարդանապաղ, Հայր իմ՝ զոշեաց Աստարաւէ,
Զի՞նչ շող լուսոյ նոր ծաղեաց քեզ, պատմեա՝ զի լուայց թէ մարթէ,
Սարդանապաղ ետ պատասխան, ահա Ամբակ գայ զհետ մեր,
Լաւ է զի նա մեռցի յուղւո՞ս, և պատասխանս ո՛չ յայտնէր:

Պատասխանի ետ Աստարաւէ, հայր իմ ամօթ է զահիդ,
Թէ դեսպանի վտանգ հասցէ երբէք ի ծոց աշխարհիդ,
Ցարդ դաշնակիցք անիրաւ են յամենայնի զոր դործեն,
Յայնմ հետէ արժանապէս զվրէժ շարեաց ինդրեսցեն:

Այլ զի ինքնին խոստացար ինձ վարիլ զիարդ ասացից,
Կացցես բարեաւ մինչ առ Պարոյր ի խորան իւր գնացից:
Գայցէ Ամբակ: Ամոք բանիւք զնա ի քեզ յանկուսցես,
Անբռնադատ յօժարութեամբ յետս յիւր ուղւոյն դարձուսցես:

Ասասցես՝ թէ կամիս առնել՝ որպէս Պարոյր էր խօսեալ,
Վասն այն զհետ այնք դեսպանի անձամբ իսկ ես փութացեալ,
Ուրախութեամբ ընկալցի նա զհաշտութեան քո պայման,
Զոր միանգամ առարկեսցես անդորր նսաեալ ի քում տան:

Յորժամ զօրք քո շուրջ պատեսցեն՝ որք ի դարան կան մատեալ,
Ածցես զնա ի Աինդարայ՝ ուր զետնափորք են կերտեալ,
Հանդիստ տացես յայն ապարան՝ ուստի բաւիդք լայնանան,
Որոց միոյն կայ ի զլուխ կախաղանեայ բուրաստան:

Քանզի և եռ զՊարոյր կամլում ի պիշերիս գողանալ,
Յայն բորաստան առաջնորդել՝ զար այլ կարծեն աւերեալ,
Այլ ի նախնեաց քոց Արքայ-Հայը՝ մին որ տիրէր այնց ծաղաց,
Չեռամբ Գատեր ճոխ տարիածուաց յաւերակացն հան ի բաց :

Սարդանապաղ ծիծաղեցաւ, ասաց՝ Դստրիկ իմաստուն,
Կախաղանեայ բորաստանին՝ այս՝ մաւաք ւելք կան թակուն,
Ինձ չե անյայտ այն ապարան՝ ուստի հանեն նեղ շախուզ,
Ի բորաստան Կախաղանեայ, և այնք կոչին լայն բառ իղք :

Մինչ զայս խօսեր՝ ահա Ամբակ դայր յայն ողին միայնակ,
Սարդանապաղ ել ընդ առաջ և խօսեցաւ առ Ամբակ,
«Մի զարմանար՝ ասաց Արքայն, թէ չը իսկէ իր ի դաշտի,
«Մտանէի ի տաղաւար՝ ուր կայ Պարոյր իմ որդի :

«Եղուկ զի ո՞չ յայնձին կալայ զՊարոյրին զայն պատղամ՝,
«Եւ արդ եկի անձամբ յայտնել զզզումն իմ տարաժամ,
«Խոստրեսցուք յայսմիկ դաշտէ, և խորհեսցուք հանդարտիկ,
«Գիտեմ զի ինձ ըղձայ Պարոյր կեանս ընձեռել երջանիկ :

Եռ այս Ամբակ ետ պտտասխան «Երաշխաւոր ես ինքն եմ,
«Զի Պարոյր քեզ է մաերիմ, ասացից՝ զար քաջ զիտեմ,
«Նա չեր յօժար մըլիլ զմարա, զնինուէ սլահել պաշարեալ,
«Մահ պարեաի ցարդ քարոզէ՝ թէ նինուէ զի՞նչ է կըրեալ :

— «Սարդաշատ է ոինուէ քաղաք, մըթերք իւր ո՞չ բաւեսցեն,
«Թէ նինուէի զրոնք և զոնակը ամիսս երկուս փակ կայցեն,
Զայս տսելով Սարդանապաղ՝ երթայր յուշիկ, և Ամբակ,
Զհեա նորա զնայր ճեմելով՝ որպէս ընտել արբանեակ :

Եւ Ասարաւէ տեսեալ թէ Հայըն արդէն տիրեադ Ամբակին,
Տակաւ ողղեաց դէսլ ի բանակ Հայոց զզլուս նըմոզին,
Խոկ լրտեսին ետ զիւր պատուէր, և արձակեաց ի քաղաք,
Էւստի ելեալ էր Աստարաւէ, Սարդանապաղ և Ամբակ :

Եկն Աստարտէ՝ հաս ի Ճամբար՝ ուր կան պայշիկը բանակին,
Ասաց զանձնէ՝ թէ յԱմբակայ ունի պատղամ՝ ծանրագին,
Ընդ փյօթ ածին՝ ուր կայր Պարոյր, որ հանդերձեր արդ ննջել,
Զաւաշորեարն ոչ կամելով երկար զրոցիք ինչ տանջել:

Կ խորտնին կայր առանձին Պարոյր և մի ի սարկաց,
Այր ծերացիալ առ զրան նորա՝ ի Սկայորդոյ ի զերեաց,
Էր Աստարտէ ընդարմացեալ, շիարէր բանալ զիւր բերան,
Թէ և զանձնէ ասացեալ էր՝ թէ Ամբակայ է զեսովան:

Բայց փոյթ զարձաւ առ նա ուշ իւր, և խօսեցաւ Աստարտէ,
«Զիս առաբեաց՝ ասէ, Ամբակ՝ առ քեզ Պարոյր՝ ի զաշտէ,
«Ասաց՝ զընա՛, մուտ առ Պարոյր, պատմեան նմա թէ զերի եմ,
«Զիս ելուզակը հակափեցին, հա՞ մինչ ի մահ մասնեալ չեմ:

Խուճապեցաւ քաջիկ Պարոյր, էարկ զանձամբը վառապան,
Էառ յաջ իւր Հայկին զնետ, լիր ամոյի զիւր խորան,
Առ զրամբը վրանին կան երիվարք, ի մին հեծաւ Աստարտէ,
Եւ ի մի սն աշտանակեալ Պարոյր եւ ի բանակէ:

Եհարց Պարոյր, զի՞նչ քո աճուն: Պատասխանեաց «Ե Աստրիկ,
«Հայր իմ մի է յաւաղանույն՝ որում հլու են Ասորիք,
«Կ յարձակիլ Դաշնաւորաց յաճախեալ են ելուզակը,
«Զ Ամբակ կալեալ են Նինուէի զարանակալ հըրրոսակը:

«Ես ծանօթ եմ ամենեցո՞ն որք և զհայր իմ ճանաշե՞ն,
«Ասարիկ շոնի ուստէք երկիւղ, վասն այն շրջի միշտ անզէ՞ն,
«Յանողրահ յանզէ՞ն պատանեկէ որ ինչ ծածկել ոչ կամի,
«Եյս էր առիթ զի Ամբակ ինձ յանձնեաց զիւր բան պատղամի:

«Ամբակ երթայր զէու ի Նինուէ, ուստի էի եօ ելեալ,
«Դարանամուտ հրասակը հասին, զնա արարին ծերակալ,
«Ես վարեցի զերիվարնիմ, հասի փութով յայն ամբոխ,
«Զ Ամբակ զտի արդէն ի ձեռն պահանորդաց յեղափոխ:

«Եսաց կապեալն «Ես Գեւովան եմ» ի Պարոյրայ առաքեալ,
«Սարդանապաղ զոցէ լիցի իմ զալատեան ակնկալ,
«Ի ուր կենացգ՝ Երի առ Պարոյր, ծանա թէ եմ զերի,
«Իւր Ամբակայ Հայոց նըսպասա՝ մինչդեռ պահեն կենդանի:

«Գժուարութեամբ ծանեայ՝ Պանդուխութէ թէ Պարոյրդ այդ ով ոք էր,
«Հարձափարձ իմ մնացր անպատութէ ծեր Հրաս ոք ինձ չոցնէր,
«Ասաց, առ այն Բաղրիդուրն Ե՝ որդի քաջին Ախտիբըսայ,
«Ար բոնացեալ ի Հայուսան կաշի անուամբ Պարոյրայ:

«Երեի՝ թէ Հայր Եկեալ են յօդնութիւն մեր Կինուելի,
«Եւ մեկուսի ի Դաշնակցաց կան բանակեալ ի զաշտի,
«Դու զբանակ խնդրեամ Հայոց, անդ զՊարոյր իսկ զացես,
«Թէ բարեկամ ես Կինուելի փրկել զՎեսպանն փոյթ կալ ցես:


«Զախն ողջոյն զեղերեցայ մերձ բանակաց զաշնակցաց,
«Մարք Վայրինիք, Բարելոցիք՝ Հաւասար են զազանաց,
«Միայն ի մէջ Հայոց զափ մարդավայել կրթութիւն,
«Յարաց վաղ են հերքեալ մերժեալ կոշտ և կալիս սաղութիւն:

«Ի մերձենալ իմ ի բանակ և յանուանելն իմ զԱմբամի,
Եւ ո՛չ վայրիեան մի յարեաւ ինձ ուրեք ոք, ինչ, իոշնդակ,
Զիս շութափեալ բերին առ քեզ, քաջայոյս եմ զի ընդ փոյթ,
Հասցուք՝ ուր է կապեալն Ամբակ, ասցուք նըման կեանու անքոյթ:

Արդեն այզուն քող մերկանայք յանձնեն զշզորշ նրբաթել,
Մինչ լեռնոսեաց կատարք հեռուստ սկսան ի յակն անկունել,
Ասէ «արոյր» ո՛չ զիսէի՝ թէ առ ափամբք Տիզրիս,
Գան բարձրաբերձ լերինք կամ ըլուրք Հանգոյն մերոյն հիս սկսի:

Պատասխանի ետ Ըստարաե, ձեզ զայն լերինս ետ բնութիւն,
Մեզ պարզեեաց քրանավաստակ անխոնջ երկանց ժոյժ առկուն,
Յաւորց մեծին Շամիրամայ՝ որոյ զուսոր էր քո Հանի,
Հրաշակերից չէ սովառեալ շար ի շինուածս Կինուելի:

Այս լեռնոտիք արուեստականք՝ են արդասիք այնց ձըղանց,
Որովք յաւետ հըսչակեսցին արքայից մեր փառք երկանց,
Ասու է Պարտէզն՝ զոր Շամիրամ յրդացաւ ի Հայոստան,
Եւ ընդ երկնելին անուանեցաւ Կախալտնեայ բուրստան :



Ա յաղեն աչք ռարուրայ տեսարանս արհեստին ,
Զոր սոկեզօծ բացափայլեր տուաջին շող արեղին ,
Այլ այս արեգ ոչ զայն նշոյլո ծոտալեր յիւր Հայուսանն ,
Պարոյր խանդայր՝ զի Վիջաղետք ևս ի նոյն Լոյս զու արթմանան :

Արհեստակերտ լերինք բարձոնք են աշտարակք աղիւսեայ ,
Քրդնաղիսակ վերամբարձեալ ի հարթո զաշտաց Սիղարոյ ,
Կտաւըք բրդանց անհետան յերկնից վերին ի զաւառ ,
Աւր զժուարին լինի մարդկան առնել շնչոյ տուրեառ :

Զայս երենարերձ բրդանս զատարկս ծածկենամբաւ կոյտք հողոյ ,
Զոր առետեզը պեղեալ հանին բիւրք մըշակաց ի զետայ ,
Վըտակք զետոց շրջակայից՝ որք ի Տիղրիս անկանին ,
Հընաղանդեալ կամաց բրրչաց՝ ի խորափորս ժուլուին :

Հարիւրաւոր կղզիք մանոնք զարդարեն զայն նոր ծովակի ,
Աւր անհամար նաւակք որտոց՝ ցանցս արկանեն յաջ , յահեակ ,
Եւ հող ելեալ ի յատակեն յերկնուսու հայի ի նոսին ,
Եւ զարմանայ զի յիւր տեղունք հետուտ հսկեալ ջուրք յածին :

Ի վերամբարձ ծայրից բրդանց ձղին շղթայք և մալուխք ,
Արովք ամուր սնակեալ կապին հալոկցա շեղջք զաշտամուխք ,
Եւ միայն մին յայս հաստ մալիսոց է որ ձըդի սանդխանման ,
Եւ աննշմար հանէ զաղանի յայն օդաճեմ բուրաստան :

Ասպարեղ մի յերկայնութեան, ասպարեղ ի լայնութեան,
Զորից տանոց կախեալ կայր յօդս այս հրաշակերտ բուրաստան,
Յանիուտ փայտից յատակը նորա ծածկեալ երեք զրկաշափ,
Հողով՝ որ սոսկ ճախարակօք է ամբարձեալ երկնաշափ։

Եհարց Պարոյր՝ լուեալ եմ թէ Կախաղանեայ բուրաստան,
Ի Բարելոն է լեալ ի հնումն, երբ ի Նինուէ փոխեցան,
Պատասխանի ետ Աստարաէ, Բարելոնեանն անդ չքայտ,
Եսկ Նինուէին ձեռամբ կրտսեր Շամփրամի շինեցաւ։

Արկնեաց Պարոյր՝ բազումք յիմաց նախնեաց եկին ի Նինուէ,
Այլ ի նոցունց ո՞չ ոք զզույ բուրաստանիս լուեալ է,
Զարմանալի թոփի ինձ այս, զի ազդ մեր տատ դայ, երթայ,
Եւ ո՞չ երբեք յերթեեկաց զանտն սորին ցարդ լուայ։

Յիրաւի զի այս հրաշակերտ չունի յերկրի զուղանման,
Եւ յաւէտ քան զՆինուէի սլարիսպս արժան հիայման,
Քար ընդ քարանց պատուասելով զամբարտակն այն ամբառնալ,
Նախնին իմ Հայի ի Քաղանէ էր Ներբողայ տւանլեալ։

Այլ յօդ կախել որպէս լապտեր լայնածաւալ բուրաստան,
Եւ ընդ նովաւ ծով կլցեօք լի, զի՞նչ հրաշալի տեսարան,
Իւրաքանչիւր կղղեակ ունի զիւր հովանոց զուարձալի,
Յորս ի զրօսանս յաճախ գիմեն յաւորս տապոյ տօթալի։

Մինչ խօսէին զայս՝ երկոքին մտին ի բուրդն աննշմար,
Յորս սենեակ ի սենեկէ փոխակըրէին անդադար,
Եւ զի կերտուածք այնց սենեկաց սլոտտակալէս ամբառնան,
Սորս տակաւ յերկրէ հատեալ դէս ի յերկինս վերանան։

Թէթեալ նոց էր Աստարաէ, յաւէտ թռչեր, քան թէ զնայր,
Պարոյր ծնունդ լերանց Մասեաց՝ յիւր ուղեկցէն ոչ յետս մնայր,
Այսպէս հասին ի ծայր բրդան, արհեստակերտ այն լերին,
Աւը ծանրանայր շնչառոթիւն՝ առ բարձրութեան դաւառին։

Չըղղաց Պարոյր եթէ զիանդ անցին ընդ կարդ նեղ սանգղոց ,
Մինչ Աստարտէ Ճեղքեաց ձեռօք զդալար ոստս խիտ ծառոց ,
Բացաւ հանդէս աշաց նոյտ սրանչելահրաշ տեսարան ,
Այս էր մուտ մի ընդ որ տեսաւ Կախաղանեոյ բուրատան :

Յայլ միտս եղե քաջիկ Պարոյր , զանձն մոռացաւ՝ թէ ուր է
Զնանուփար խնդրէր անդէն՝ յիշեալ թէ նա կին իւր է ,
Կարծէր թէ նա առ վայրիկ մի յանձնէ իւրմէ կայ հեռի ,
Շարժմամբք ոստոց և սաղարթից դալուստ տիկնոջ դուշակի :

Խոնջեալ էր յոյժ ի վերելից սանդղոց բրդան բարձրութեան ,
Ընկողմնեցաւ ի ծաղկալիր վայր գալարի փափկութեան ,
Աստարտէ ևս մեկուսացեալ անհետ եղե ի ծառոց ,
Պարոյր թաքոյց կնետ Հայկայ , և ինքն եմուտ քնոյն ի ծոց :

Վնորջք՝ որոյ անդրիք սպաշտին սպատարագօք յերաղմայն ,
Զեկին ի նորաստ նոհապետին որ կայր յանդորր զիրկ քրնոյն ,
Վասն այն Մորփես Սիջաղետաց , որ և ի Յոյն էր սպատեալ ,
Յաշո Պարոյրայ ցանեաց զմեկոն՝ յիւր թովչութեանց թոյն խառնեալ :

Պարոյր ետես և յերազի զնանուփար տիկին իւր ,
Որ աւանձին ի սպատափղի Արմափրայ զրօնոյր ,
Ետես զտիկինն Պարոյր Հեռուստ , և սիրալիր մերձեցաւ ,
Այլ յորժամ բռոն զաջոյն եհար , նա յոյլ կոսան փոխեցաւ :

Գեղահրրաշ տեսիլ կոսին զսիրտ Պարոյրայ կախարդէր ,
Եւ զնանուփար յագւոյն մաքոր՝ հանել ի բաց հայթայթէր ,
Տաղնապէր յոյժ ի տեսլենեն սիրտ Պարոյրայ դաւնադին ,
Ենեղութեան զարթեաւ ի քնոյն , և զաշո երաց զայրազին :

Զի՞ն տեսանէ : Այն օրիորդ՝ որ ողորէր ի տեսլեան ,
Ընդ նանենեաւ յեցեալ ի ծառ կայր սպատանոյն յանդիման ,
Նոյն զարդք քայլուից և մանեկաց , նոյն աղարօշ ի զլիին ,
Նոյն ողարեղօտ մարդարայես , և նոյն կօշիկը կան յոտին :

Նոնսիարայ հանդոյն հասակն մատաղատոնի է նոճոյ ,
Գոհարազարդ գաշոյն ի կախ կայ յազիբը իւր զզօսոյ ,
Վարդակարմիր քեհեղք ձորձոյն յաւերժահարսն զոմն յայտնեն ,
Արք ի թովել զմահեանացուս եքրեմն յամդոյ իջանեն :

Պարոյը էարկ զաշս իւր յայն կողմ՝ ուր նետ Հայկին կայր եղեալ ,
Ետես զի կայր անձեռնամուխ , և ոչ ոք էր զայն դիտեալ ,
Ազա զդիտակն յածեալ զիւրե՝ ընդարմանայր հիացեալ ,
Թէ զիարդ բնութեան այնքան սկարդեք իյեն յայն վայր միացեալ :

Յարեաւ նստաւ ուր կայր անկեալ . Ետես անդ զի նոր ձորձք կան ,
Սերձեցաւ այն կոյս անծանօթ՝ զսր տեսեալ էր ի տեսլեան ,
Ասէ՝ Պարոյը՝ ի պէտս քո են՝ այս նոր զզեսաք հանդերձեալ ,
Զի քո ձորձք յոյժ յուղեղնալոյդ զըստանին արդ փոշոսեալ :

Եհարց Պարոյը , ո՞ր է Աստրիկ իմ տատջնորդ յայս սեղի ,
Ծիծաղեցաւ կոյսն Աստարտէ , ասէ՝ Աստրիկ սկատանի ,
Գնաց կատարել իմ զայլ հրամանս՝ սրոց այս էր առաջին ,
Զի յայս Պարոյ սքանչելակերտ բերեք զզարոյը սկատանին :

Պարոյը՝ ես ինքն եմ Աստրիկն այն , միմէ քեզ սիրադ ոչ ազդէ ,
Թէ որ յերեկն կոչէք Աստրիկ՝ այսօր կոչի Աստարտէ ,
Ասոյդ է զի Ամեակ եղե յելուղակաց ձերքակեալ ,
Այլ նա ոչ էր համբաւաբեր առ քեզ երբէք զիս կարդեալ :

Պարոյը՝ զքեզ սիրէի ես՝ երիք ամօք վաղաղոյն ,
Սինչ չե էր քո նոնսիարայ՝ շնորհեալ զայոյոց աիկնոթիւն ,
Գերեալ էիր զիմ սիրտ սիրովէ , զքոյդ սիրտ ետոր տիկնոջ քոմ ,
Զինչ զործեսցէ կոյսն Աստարտէ , որ զնետ սիրոյդ կրէ յիւրում :

Պարոյը կրինեաց , ինձ ասացիր՝ թէ անան իմ է Աստրիկ ,
Հայր իմ է մի յաւալանւոյն՝ որոմ Շլաւ են Աստրիք ,
Եյտ՝ այդ բանք կուսանիս են , ետ սկատասխան Աստարտէ ,
Հայրն իմ արքոյն Աստանապաղը յարդ ևս Աստրիկ զիս կոչէ :

Ել, յոտն եկաց Պարոյր զռւարթ, ոչ կամէր զիւր ձորձ փոխել,
Այլ Աստարտէ ոչ յապաղեաց թախանձել և համողել,
Յորժամ զզեցաւ զզեստ զայն նոր, զզաց ի ներքուստ յեղադարձ,
Երկեաւ՝ զի մի կորիցէ ինքն վասն հայրենեաց իւր անդարձ :

(Վասն այն յորժամ եղիտ զիսլուկ ժամ յառանձին միութեան,
Զնետ Հայկայ էած զանձամբ հանգոյն յուշիկ շօշափման,
Փարատեցան համակ հրապոյրք, քայքայեցան թովչութիւն :
Սէր Հայրենեաց և սէր տիկնոջ զզեցան զնախկին զօրութիւն):

Կալու մեղմիկ կոյսն Աստարտէ զաջ սլատանւոյն Պարոյրայ,
Ասաց դու զօրն ողջոյն ի քուն անցուցեր ի ծոց Մորփեայ,
Ահա արև մերձի ի մուտս, երթիցուք ի հովանոց,
Աւր սլատրաստ կայ սեղան ի ճաշ՝ մեղ համարամ կերակրոց :

Հովանոցն էր յասմիկահիւս, և շուրջ զնովաւ վարդենիք,
Փոխան ցանկոյ բուրաստանին, թըզենիք և ձիթենիք,
Խառն են տանձիք, ինձորենիք, սերդեկիլ լնդ նըշենեաց。
Սալորենիք, ծիրանենիք, դեղձիք լնդ նո նենեաց :

Իւրաքանչիւր ծառոց արմատք շուրջանակի սղնեալ կան,
Շահողրամօք, շահասպրամօք, այլուր քրքմովք լնդ նարդան,
Ծաղկունիք և ծառք որք չերեխն ի Հայաստան աշխարհի,
Անդ խառնիխուռն բերեն պլատուղ հանգոյն բալի, կեռասի :

Թաւրինջք կան յորթս և յունապիս միարանեալ ի բուրել,
Զիունկս անուշունս հոպոտելեաց, և զունովք զաչս սլարարել,
Աւր սիրամարդ զփառատենչիկ տուտ ամբարձեալ դէսլ ի վեր,
Եւ սիդաձեմ սրպէս փեսայ, զզնայ, շրջի, դայ յերեր :

Փասեանիք զորս թողեալ էր անդ ի զեաեղերս Փիսոնի,
Աստ յանդոնին իսաղալ հրձուիլ ի ստուերս ծառոց լեմնի,
Ծանեաւ Պարոյր զի ի խորտկաց զոր հանդերձեալ էր ուտել,
Եւ զիսորոված աղնիւ հաւոյն ունի հանդէսլ աեսանել :

Թուչունք, թուշնակք՝ ոսկեփետուրք փայլին հանդեպ արեւու,
Քաղցրաձայնեն յոստս անդ ծառոց իւրաքանչիւր յիւր սլարու,
Սոխակ, քնարիկ երդաբանեն, մին յայտնապէս մին դաղտնի,
Նըմա ծածկոյթ իւր թանձրութեամբ տայ վառ ի վառ վարդինի:

Նարընջենիք տան թութակին առաստանի ի հողմոց,
Երկու երեք ժամն առ ի կախ մնայ զծառոց և զոստոց,
Ունկն դնէ բանից մարդկան, ըմբռնէ զմին ի բառից,
Եւ քաջ ի դէպ, կամ և յանդեպս կրկնէ ի լուր բնաւից:

Պարոյր յարմար եկն իւր լեզուին, զի ստէպ կրկնէր Աստարտէ,
Թութակ ուսեալ զայն ի նմանէ՝ խուզոտ ձայնիւ կարկաչէ,
Պարոյր որ չէր զթութակ տեսեալ զարհութեցաւ ի ոկզբան,
Մինչեւ պատմեաց զայն Աստարտէ, մատն էր եղեալ զարմացման,

Դեռ չէր մնեալ ի հովանոց՝ Պարոյր ետես զջրմուղ,
Որ յամպս վերինս ցայտէր զջուրս՝ հանդոյն առուաց յորդաբուղս,
Ասէ՝ զի՞նչ է այս՝ ով դշխոյ։ Աստարտէ ետ՝ պատասխան,
Սրհեստակերտ աղբիւր է այս՝ զոր մեք կոշեմք շատրուան,

Փողըակք սորա են յայն դրանէ՝ ընդ որ յերեկն մըտաք մեք,
Այլ ակունք ջուրց են հեռի յոյժ, ի զլուխ լերին կորկիւրէք,
Արչափ ցայտէ ջուր գէպ յերկինս, և բարձրանայ յամպ վերին,
Այնչափ իսկ է ստոյդ անվրէպ և բարձրութեան չափ լերին,

Եւ Աստարտէ յուսայր լըսել ի քաղցր շրթանց Պարոյրայ,
Թէ կատարեալ է ամենայն, մի թերութիւն է սորա,
Զի ո՛չ զոյ աստ այն հրաշալի ծաղիկն կոշեալ Համասփիւռ,
Զոր մի միայն ունի Վարագ ի դրախտամերձ յիւր սիիւռ։

Իսկ Պարոյր ո՛չ կամէր յիշել զայն որ զանձ էր աղպային,
Զի մի տացէ պատեհ առիթ յանդզնելոյ դշխոյին,
Կարէր առ այս տալ պատասխան, աստ Համասփիւռ ես ինքն եմ,
Հոտոտեաց յիս, բոլորապուղ զանձն իմ սիրոյդ զոհ բերեմ,

Ճաշն վայելուշ ճաշակողաց, սպասք համբուն են ոսկի,
Գինին աղնիւ անուշահամ, համադամք ազգի ազգի,
Իւրաքանչիւր խորտիկ կըրէր Աստարէն զիւր անուն,
Զոր Աստարտէ պարտ վարկանէր մեկնել որպէս պատմութիւն:

ԱՅԼ Դշիոյն ինքն ևս ոչ զիտէր խոհանոցաց զպայման,
Հրահանդեալ էր ոչ ի նաժիշտ, այլ ի զահոյս տիկնութեան,
Վասն այն և ոչ զանուն բազմաց յայնց ուտեստից յոր ջորջէր,
ԱՅԼ զուարձախօս անոյշ բանիւք զանձն ի բաւղաց Ճողովրէր:

Մինչ չե էին զճաշն աւարտեալ՝ լուսին եցոյց զերես իւր,
Եւ տունջեան ակն լուսատու՝ տակաւ յեղերտս պարուրիւր.
Աստարտէի ցոլացաւ յուշ Սոսանուիրին այն ընթրիք,
Զհետ որոյ անմիջապէս կայր հանդերձեալ հարսանիք:

Խորոց սրտին իւր հառաջանք եղեն նըմին դաւաճան,
Ո՛չ ծածկեցան ի Պարոյրայ զաղտնիք նորին խորհրդեան,
Կայր Աստարտէ ի մէջ երկուց մահահրաւէր վրտանդաց,
Ողջախոհիցն էր այս տագնապ ի փորձ նոցին սերաւութեանց:

Փառնակ, Զամիր՝ պատկերանան ի միտս անբիծ այս ամլոյն,
Բայց Նոնոփար չէր խոչընդոտն ոգւոց նոցին զուգելոյն,
Աստ անարատ վարդ կուսական հսկէ առ իւր մաքրութեան,
Անդ Սէր Ազգի զամուսնական դոչէ պահել սուրբ պայման:

Կարէր կարծել երբէք Պարոյր՝ թէ Լուսաբեր օրիորդ,
Լիցի ի ծնունդ Հըրաչէի՝ սիրոյն իւրում բաժանորդ,
Կամ Նոնոփար անկեալ յանդէտս խարդաւանից ի վանդակ,
Արիւնապարտ ախոյենին ծնցի ի հարսն զԱրաւսեակ:

Աստարտէի ուխտ փղձկալիր՝ եհաս ի լուր օրհասին,
Զայլ եղանակ ելից կենաց վճռեաց շնորհել նոր Հարսին,
Զոր ինքն ընտրեաց կոյսն Աստարտէ՝ նախքան զվարդին իւր խոտել,
«Թէ Նինուէի կայ կործանել՝ բոյով ի մահ խարուկել»:

Ծանեաւ կուսանն զի Պարոյրայ ոդւոյն տիրէ Նոնոփար ,
Ո՛չ յանդգնէր վասնել ճգունս սպրդիլ յայն բռնաբար ,
Հաւատարիմ եկաց դաշին՝ զոր սլայմանեաց ընդ օրհասին ,
Զանարդոթեան վատ յիշատակ չթողոլ յաւանդ դիակին :

Թէ յաջողէր զդաստութեամբ զՆոնոփար վըտարել ,
Եւ դահոյից նորա ի սիրտ նահապետին անդ տիրել ,
Պատրաստ էր միշտ Վեհապետին Հայաստանի հարսնանալ ,
Եւ Պարոյր Միջաղետաց ժառանդ դահին ստանալ :

Սարդանապաղ ոչ յողդողդէր , ոչ տատանէր և ժամ մի ,
Եթէ Պարոյր հաճէր հիւսել զՆինուէ ընդ դահ հայրենի ,
Նոնոփարայ յընկերութիւն հըրաւիրէր զնստարտէ ,
Զրաղձանաց Շամիրամայ հին փուշ քաղէր ի սրտէ :

Ո՛չ Կիաքսար , ո՛չ Բելեսի կամէին կալ հակառակ ,
Սարդանապաղ ինքնայօժար տայր Պարոյրայ զիւր պըսակ ,
Ինքեան շատ էր թէ յապարանս յանկեան ուրեք Նինուէի ,
Տիկնամբք , հարճիւք և ներքինեօք կացցէ կենօք վաղեմի :

Այլ ողջախոչ զարմին Հայկայ միակնութեան օրէնք հին .
Ո՛չ ներէր զի երկուք նստցին նահապետի ի սրտին ,
Զոր ազգ ծանեաւ առ անգամ մի տիկին Հայոց հռչակեալ ,
Միայն զրկէր մահ ի դահէն՝ որում էր նա վիճակեալ :

Թէպէտ խօսին զհրաշալեաց՝ զոր յինքն ունէր բուրաստան ,
Այլ Պարոյրայ միտք թուչէին ստէպ յիւր քաղցր Հայաստան ,
Ծիրանածին կոյս Աստարտէ բազում անդամ չերեէր ,
Յաշս Պարոյրայ՝ մինչ նա զիւրով Նոնոփարաւ մտօք յածէր :

Սէր իմ Պարոյր՝ առ զիս կնութեան՝ ասէր կուսանն Աստարտէ ,
Չեմ դիմամարտ Նոնոփարիդ , այլ պատուադիր ի սրտէ ,
Տուր ինձ խորշիկ ի հոգւոջ քում , Նոնոփարոյ ուր է զահ ,
Նա միշտ Տիկին Հայաստանի թող կոչեսցի բարձրադահ ,

Միակնութեան այս օրէնք մեր՝ պատասխանի տայր Պարոյր,
ի տան Հայկայ կայր յայնց աւուրց՝ յորս յաստուածոց Մին սլաշտիւր,
Հայկ նախահայր՝ Տէր, Արարիչ՝ զնա միայն հռչակէր,
Եւ իւր Հայկերդ բանիւ նորին զհանդերձեալսն նըլարէր :

Թէ ներեսցի երկիցնութիւն՝ բաղմակնութիւն տիրեսցէ,
Եւ յաւելուած միոյ ի դիս՝ աստուածս բաղումս սերեսցէ,
Ընդդէմ ձերոյ բաղմակնութեան ո՞չ Շամիրամ բողոքէր,
Ոչ մեր Դերկէթ, Շամրիկ, Զամիր դշխոյն նըլին հետևէր :

Դշխոյ՝ արդէն ի Հայաստան նոր կարդ ունի մըտանել,
Որ ծերոց մերոյ ազդին ունի խոչ խութ զըտանել,
Իւ մարթացայց արդարանալ յաշո ծերունեաց իմ ազդի,
Մինչ իմ տիկին յաշաղանաց կըրեսցէ խոց յիւր յոզի :

Կարէ լինել համանգամայն ոք Ասորի և Հայկաղն,
Այդ հարճից է միայն վայել լինել նաժիշտ և թագաղն,
Ի կանանոյն յարկ սողոսկիլ յուտել յըմկել ցյագուրդ,
Մարդավայել կենցաղ զաղնիւ կոխել առ ոտն անխորհուրդ,

Այսպէս էին զրոյցք սոցա, սէր բռնաքարշ ի հոգի,
Եւ անջրազետ ի մէջ նոցա օրէնք նախնեաց, սէր ազգի,
Անցանէին ժամը և աւուրք, բոլորէին և եօթնեակք,
Պարոյր անդէտ թէ դաշնակցաց՝ յի՞նչ վիճակի կան բանակք :

Լրտես՝ զոր յետս դարձոյց Դշխոյն՝ չե ևս հասեալ ի Ճամբար
Ընդ փոյթ եհաս նախ առ արքայն Արդանապաղ ի Սինդար,
Ուր խոտորեալ ընդ Ամբակայ կըուէր դաշինս հաշտութեան
Զդշխոյին յայտնել պատղամ՝ որ եղեալ կայր յիւր բերան :

Այս ընդ այդն առաւօտու՝ Ճեպեաց Հայոց ի բանակ,
Ծանոյց աւադ զօրավարաց՝ թէ սահապետ և Ամբակ
Ճրաման ետուն քաջաց Հայոց զի մի՛ բընաւ մարտիցեն,
Մինչ չե Պարոյր ընդ Ամբակայ դարձ ի բանակ առնիցեն :

Սարդանապաղ մինչ զԱմբակայ ապահովեաց զփախուստ ,
Դարձ ի Նինուէ զգաշնակցաց արար կնքել զկորուստ .
Վառեաց զզօրս սպառազէն , և յարձակեալ ի բանակ
Բարելացւոց զբելեսի՝ եղիտ զօրօք առանձնակ :

Բորբոքեցաւ մարտ մահաշշուկ Բարելոնեան ի զօրուն ,
Ոչ մարթանայր քաջն Բելեսի ունիլ զդէմ Ասորոյն .
Սարդանապաղ աջով եմոյծ ի զիմամարտս զահեղ սուր ,
Եւ ահեկան յառ . և յապուր Բարելացւոց էարկ հուր :

Անդուր մնայր բանակ Մարաց որ կայր ձգեալ հեռագոյն ,
Յարեմտից քաղաք Նինուէ էր անջրապետ մեծագոյն .
Յեկբատանայ դայր Կիաքսար յարելից Նինուէին ,
Անց ընդ Տիգրիս ի հարաւոյ և նստաւ ի զետափին :

Առաքեցին Բարելացիք գուժկանս առ Մարս ի ճամբար ,
Ուր ապահով ի պատնըշին կայր ամբացեալ Կիաքսար ,
Բայց ոչ հասին համբաւատարքն ի հեռաւոր յայն բանակ ,
Հրոսք Աստարտեայ յումպէտս հանին զջիդն նոցին բովանդակ :

Փողք հնչեցին Բարելացւոց աճապարել ի փախուստ ,
Հնարք Աստարաեայ սպառնային ամենեցուն իսկ կորուստ ,
Տարաժամեալ էր և օրն այն Բարելացւոց մահաբեր ,
Սարդանապաղ մուտ ի Նինուէ՝ հանդերձ զօրօք յաղթաբեր :

Երրորդ օր էր այս Պարոյրայ անկանելոյն ի դարան ,
Յոր յաջողեաց լինել սատար Կախաղանեայ բուրաստան ,
Մինչ նահապետ Հայաստանի և զօրավար իւր Ամբակ ,
Եւ անտեղեակ անցից իրացն կային՝ Հայքն ի բանակ :

Թէ զըտանէր Սարդանապաղ յիւր դաշնակցաց օղնութիւն ,
Բանակ Մարաց զնոյն կըրէր՝ Բարելական անձկութիւն ,
Պարտ էր զօրաց քաջ Ասորեաց յաւուրս քանիս հանդիստ տալ ,
Զի յարշաւան ընդդէմ Մարաց մարթանային զօրանալ :

Վասն այն յորժամ բարելացիք սթափեցան յարհաւրաց ,
Որ զնոքօք կայր տարածեալ յահէ սըրոյն Ասորեաց ,
Յետս գարձան առ Կիաքսար , և ընդ Մարաց միացան ,
ի սիրտ Մարաց նոյն արհաւիրք անտեսաբար փոխեցան :

Զի՞նչ նոր տաղնապ յաւելաւ յայն՝ յորժամ ծանեաւ Կիաքսար
թէ Պարոյրայ դեսպան Ամբակ դեռ չէ գարձեալ ի Ճամբար ,
Եւ թէ Պարոյր պարանեալ կայ ի գարան ինչ նորանշան ,
Ո՛չ զիտէ ոք՝ թէ մեռեամլէ , կամ թէ ուրեք կայ կենդան :

Մինչ Կիաքսար յայս տատամնէր , Սարդանապաղ հաս զօրօք ,
Որք ամիս մի շռայլէին բարելական աւարօք ,
Ո՛չ մարթանայր տիրողն Մարաց զշայս կարդալ յօկնութիւն ,
Ստիպեցաւ ընդ Բելեսեայ բառնալ զմարտին ծանրութիւն :

Հնարք կրթութեանց և աստ հասին քաջ Ասորեա ի նըպաստ ,
Քաջք ի Մարաց , բարելացւոց կործան եղան դիտապաստ ,
Թէ ո՛չ զրաւեաց առ այս նուապ Սարդանապաղ զյաղթանակ ,
Սակայն և ոչ կարէր մղել միւս անգամ մարտ Մար բանակ :

Սարդանապաղ համակ զօրօք դարձ արար յետս ի Նինուէ ,
Միայն երբեմն յընդերկրեայ անցս երթայր ուր կայր Նստարտէ ,
Խորհէին յոյժ , այլ անպտուղ , յամառտ թիւն Պարոյրայ ,
Զողին մաշէր օրիորդին . և հատանէր յոյս նորա :

Բայց և բանակ Դաշնաւորաց չէր ապահով ի վայրին ,
Զցայդ և ցերեկ յերազէին՝ թէ ահա զայ Ասորին ,
Վասն այն երկու այն թագաւորք Կիաքսար և Բելեսի ,
Զմիամօր դստերս իւրեանց զետեղեցին մեկուսի :

Վայր ապահով երեեցաւ բաղմակղեակին հեռաստան ,
Ուր իրրու յօդս կայր վերամբարձ Կախաղանեայ բուրաստան ,
Անդ իւր յանքոյթ տեղի եղան դշխոյք աշխոյժք , զեղեցիկք ,
Եւ հատընտիր մարտիկք հաղարք և աղախնայք ուղեկիցք :

Շատ էր նոյա երեքօրեայ զբօսանաց ժամանակ ,
 Առ խելամուտ լինել անցից՝ աւանդութեանց բովանդակ ,
 Որք յածէին ի շրջակայս զեթերաձեմ պարտիղէն ,
 Յոր ոչ ոք էր դաւալ զմուտ՝ յահէ օձից բոցաշէն :



Որ յեց բազմիս յերկնադիտակ ծագ վերամբարձ երկղլխի,
Յնդատ Մասեաց ի մամռապատ ձիւնազազաթ սկարեխի,
Սչք քո դիտեն զհանդերձեալսն, զանցեալսն համակ տեսանեն,
Եւ մասունք քո զառաջիկայն՝ որպէս ի վեմ քանդակեն:

Անձուս զճակատդ արդէն ճապատ՝ երեսք երկնից մթագնին
Եւ ի պարզելու զյօնից կամար՝ երկրածինք բնաւ ինդամտին,
Ակնարկութեամբ քո ծնանին անձրեք և աեղք յամպս ի վեր,
Զովացուցիչ լինին երկրիս կայլակք կաթլոց ցողաբեր:

Ըստ բուռն կամաց քոց հրամանաց թուշին յամպոց կայծակունք,
Ի թանձրաբարդ թուխսպս շոզեաց ցոլան ահեղ փայլակունք,
Գըլես զորոտ քո սոսկալի՝ գողան հիմամբք սիրտ լերանց,
Զծով մըղեն ի ծուփս ուժդին՝ սասանութիւնք զղրդմանց:

Զայս՝ Լուսընթագ մշտադարուն Հայաստանեաց Մայր նախիլին,
Յանափից առն բազմեալ ասէր՝ ցալեզարդեալ ծերունին,
Եւ հատաներ զթել խորամաւխ նրբազընին խորհրդոյն,
Յար զմայլէին սեռակնափայլ միտք որդեսէր մեր նախնոյն:

Դարձոց զաջս իւր նորդոմածին Հայէ Հայազդեացն նախահայր,
Եսես թախծեալ զիւր քնըրոշ Հարսն, զմեր զըթատ նախամայր,
Ասէ՝ առ ինչ քո Հայնարձակ բացաղանչեալ աղաղակ,
Կամ զի՞նչ զողարիկ կարմիր շրթանցդ քաղցրիկ բանիցդ նըստատակ:

Ժըպիտ անուշ պարուրեալ յիւր ի լար շրթանց խնդադին ,
Ետ պատասխան իւր Փեսային գեղածիծաղ մեր հանին ,
Միթէ և դու կարօտիցիս բացատրութեան ինչ բանի ,
2է՞ քաջայայտ քեզ խորհրդոց և կամ մտացս նիւթ դաղտնի :

Կրկնեաց քաջիկ Յարէթորդին , բարւոք ասես՝ Լուսընթագ ,
Զեն դաղտ յինէն մաքուր հողւոյդ իղձ և բաղձանք բովանդակ ,
Կամք մեր միայն է որդւոց մեր երջանկութիւն յաւիտեան ,
Յօրէ՝ յորում զիս նախահայր դաւանեաց իւր՝ Հայաստան :

Սիրելի է քեզ անդրանիկ Սկայորդւոյ՝ Պարոյր քաջ ,
Հովանանայ նըմին յաւէտ իմ՝ նախահօրս՝ հըզօր աջ ,
Զնա արդ յինքեան հիւրընկալէ Կախաղանեայ բուրաստան ,
Բայց փոյթ ի ծոց իւր ընկալցի՝ իւր բաղձալին Հայաստան :

Լուսափայլեալ դէմք ծերունւոյն հայէր յիւր հարսն բերկրալիր ,
Ճիւաղ զմաան ուղղեալ յիւր շուրթն յառէր դաշս իւր դէպ յերկիր ,
Ալնարկի յաչս հողմոց աղղեալ՝ զթես ամփոփել՝ սաւառնեալ ,
Ո՛չ պղտորել զայեր շնչով , և ո՛չ զանդայտ օդ յուղեալ :

Հոսէր ծերոյն ի քաղցր դիմաց՝ իբր յաղբերաց քաղցրութիւն ,
Եւ ուրուականք սփուին ծաւալ զխորին խուլ լուռթիւն ,
Զի թէ ելցէ բան ի շրթանց Աեհին ի կարդ դիւցաղանց ,
Կացցեն ամբողջ և անկորուստ յօդից մասնիկք կազմութեանց ,

Բարբառեցաւ ժիր ծերունին , ի վեր ցնդին ի ստուերաց ,
Հրէշք մուայլից՝ որք կան ի ծերսս և ի ծակտիս ծործորաց ,
Եւ արհաւիրք բուռն հարեալ մաղլօք զնոցուն դիսակաց ,
Բոնադատեն դառիլ լըռիկ ի թաղստեան փաղարաց :

Ասէ «Բաղում են ասպարէսք փառաց , կրկէսք պարծանաց ,
«Յոր չեն անկեալ աին ինչ կարծեաց և տեսութեան քաջարեաց ,
«Ծափ զծափի հարկանէին մըջիւնառիւծք , այծամարդք ,
Պար բոլորեն համբռն պայեկք , յուշկապարիկք քողազարդք :

Եղջերուաքաղք ընդ համբարուաց, նոժոյգք ցլաղլուխք ամեհիք,
Ի թեատակս ծուարեալ բուոց՝ ինձք և վակերք կատաղիք,
Վարէր զընձուղտս բլոոց ի բլուրս՝ յաւերժահարսն ստուերաց,
Սարսուոք, սարսափք արծնեն ի վէմս՝ զսայրս հատու սուսերաց:

Ո՛չ շարժէին ուրեք տերեք ծառոց, թփոց և բուոց,
Ո՛չ լըսէին շրշիւնք ձորձոց, կամ զկեստոց, կամ քօղոց,
Արծուիք, անզեղք, ցինք և բաղէք կլեալ զիւրեանց զճչիւն,
Սանձարկէին թեոց անզամ և մանր փետրոց զշարժիւն:

Զայս օրինակ մինչ Ճղնէին Ազատ Մասեաց ընակք համբուն,
Աւշադրութեամբ սոսկ պատկառ կալ քաղցրիկ բանից ծերունոյն,
Ի փապարաց քարանձաւաց արտաքս Առլէզ սողոսկէր,
Յոր Շամիրամ ի կորստեան Արայի զիւր յոյս պրկէր:

Տեսեալ զայս հրէշ վեհն զիւցաղանց՝ լսելի առար զիւր բարբառ,
Սիրտք համօրէն շրջակայից լցան ցոլմամբք սիրավառ.
Ասաց՝ «Պարոյր զնոյն կրկնեաց, զոր Արայն իմ սիրական.
«Յայսմ հետէ նետն իմ ահեղ է իմ թունեայց սեպհական:

Մինչ այս ի զլուխ լերին բարձու հանդիսադրէր հրաշափառ,
Զբոսասէր զոյդ օրիորդք՝ այն ինչ ածեալք յայն դաւառ,
Յաջողելով մըտանել յայն դուռն դաղտնի՝ ուր Պարոյր
Քառամօրեայ ժամանակառ ի բուրաստան պարուրիւր.

«Նոյնալէս արագ թեթե թռեան որպէս և ինքն Աստարտէ,
Մինչ զՊարոյր յափշտակէր ի դաշնակցաց բանակէ,
Ելին ի վեր, զտին զսանդուղն, անցին ընդ խիտս ձիթենեաց,
Կախաղանեայ ի բուրաստան դտան հանգոյն արծուեաց:

Զինչ տեսարան բացաւ յանկարծ աշաց նոցին յանդիման,
Կոյսն Աստարտէ ի ծունկս անկեալ փարէր զոտիւք Պարոյրեան.
Արքայական իւր ասղարօշ ի դալարող անկեալ կայր,
Եւ ինքն յարտօսր խորասուզեալ՝ կականալիր ողբովք լայր.

«Ենձ ողորմեա՞ կանչէր Դշխոյն, և մի՛ դառնար ի բանակ, ԱՄարդանապաղ տայ քեզ զիւր զահ, զՄիջազնտաց պայծառ թագ, ԱՄի՛ հաղորդիր այնմ նենգութեան՝ զոր յղացաւ Կիաքսար, Եւ զոր ուժզին ցարդ կազդուրէ Բարելացոյն խորհուրդ չար:

Ճիչ ամբարձին կոյսք երկոքին: Խուճապեցաւ Նստարտէ: Սուր մերկեցին երեք աղջկունք՝ զերկիւղ մերժեալ ի սրտէ: Թէ մին փախչէր, զհետ միոյն անդին երկուք քաջազեն, Ի շրջմոլիկս սնրաւ ուղեաց անհետ կորեան հողմօրէն:

Ի խուսափել օրիորդաց՝ Պարոյր մնաց միայնակ. Ահա ետես ի հանդիսոյ զի դայր ճեպով և Ամբակ, Եկն և անկաւ յոտս Պարոյրայ, և հարցանէր՝ թէ ո՞ր եմք, Որ մառայեալ դհայրենիս՝ զրանակ Հայոց լքեալ եմք:

Պարոյր կանչեաց. Ամբակ՝ անտ ես. դարձ արասցուք ի Ճամբար, Սարդանապաղ լուծցէ զվրէծ լինասոց զոր ինչ մեղ արար. Զքեզ և զիս միօրինակ խարեցին հնարք նենգութեան, Մեզ օգնեսցէ մեր քաջութիւն, և ոչ թակարդ կամ դարան:

Զայս ասացեալ Ճեպեաց յայնկոյս՝ ուր կար սպահեալ նետ Հայկայ, Էառ զայն նետ, զզեցաւ զիւր ձորձ, և սպասուէր ետ Ամբակայ, Զի անխոտոր զհետ ընթասցի նմին մինչ ի զլուխ սանդիմոց, Եւ ինքն նետիւն զձիթենեաց զննէր զսաղարճս խիտ ոստոց:

Ահա զտան անցք առ սանդողն, և շոյտ եհաս յաշտարակ, Յետս հայեցաւ, ետես զի դայր զզութութեամբ և Ամբակ, Երազ արագ ոստոստելով ընդ սանդուղն ի վայր վաղեցին, Եւ յարօտի առ զրան զաւթի աշտարակի զձիս զբախն:

Երկաքանչիւր աշտանակեաց զիւր սեահական երիվար, Աճապարեաց Պարոյր յայնկոյս՝ ուր բանակէր Կիաքսար, Ետես անթաղ զթիակունս, զուշակեաց զանձս ի մարտին, Եւ վրէծ քինու կոտորածին բորբոքեցաւ ի սրտին:

Նոյն բոց վրիժուց կրկին ցոլեաց մինչ ԲԵԼԵՍԵԱՅՆ բանակետող,
Երևեցաւ խանձողալիք հըրայրեցից կըրակետող,
Հէր ևս սլիտոյ զի ոք նըմին միւսանդամ կրկնեսցէ,
Քառասնորեայ իւր զերութեան զպատմութիւնն յականէ :

Հասին ողջամբ ի բնիկ դակիշ, զիւր զօրս եղիտ կազմ վառեալ,
Սարդանապաղ վանել զսոսա՝ իսկ չէր առ փորձ յանդզնեալ.
Քաջ ծանեաւ զի զայս ամենայն նիւթեալ էր կոյսն Աստարտէ,
Ընդ մահաբեր սիրոյ նորա՝ ատեաց զնա ի սրտէ :

Պարոյր իսկոյն ուղղեաց պատղամ առ Կիաքսար ի բանակ,
Պատղամատար դեսպանութեան կարդեալ զնոյն ինքն Ամբակ,
Զի երկոքին այն դաշնակիցք փոյթ խմբեսցին յիւր խորան,
Եւ զղօրավարս ժողովեսցին ի սլէսս մեծի խորհրդեան :

Կիաքսարայ տեսեալ զԱմբակ ուրախ եղեւ խնդութեամբ,
Քննեալ զառիթ յապաղելոյն լցաւ մեծաւ զարմացմամբ,
Մանաւանդ մինչ պատմեաց Ամբակ զՊարոյրին զերութիւն,
Մարսափեցաւ նենդամիտ Մարն ընդ Ասորոյն նենդութիւն :

Ապա խմբեաց և Կիաքսար զԲաբելացիս ընդ Մարաց,
Եւ համախումբ ի Պարոյրայ կոչ աւագաց արագեաց.
Ի խորանի Հայկայ թոռին նստան կարգաւ սլետք ազանց,
Որը Նինուէի ի պաշտումն աջակցէին դիւցազանց :

Ո՞ր է ճարպիկ ճարտարութիւն խիզախ լեզուին ԲԵԼԵՍԵԱՅ,
Արով երեմն Ճոխաբանէր ի համոզումն Պարոյրայ,
Արդ ԲԵԼԵՍԻ կայ ակնապիշ դէսլ առ շրթունս քաջազին,
Թէ զի՞նչ վլճիւ ելցէ անտի ի յաջողումն այն ուազմին :

Պարոյր պատմեաց ծայրէ՝ ի ծայր զյանդամանս զերութեան,
Զորոյ կսկիծ միայն մեղմէր Կախաղանեայ բուրաստան,
Այլ մինչ եհաս յայն՝ ուր երկու օրիորդքն զեղանի
Երևեցան, և Աստարտէ զբաղեցաւ յաղոնի,

Ամբոխեցան երկու արքայք՝ Կիաքսար և Բելեսի ,
Խւրաքանչիւր կասկած էառ վասն իւր դստեր և կուսի ,
Խոկոյն յարեան և ասացին՝ մեղ պարտ է դնալ յօդնութիւն ,
Դստերք մեր են , և անկեալ կան ի դաւադրեալ զերութիւն :

Պարոյր ասաց . Եկից և ես : Առին տասն այր անձնիւր .
Ամբակ դտաւ ի մէջ Հայոց ի թիկնապահս Տեառն իւր .
Գնացին դտին զալեղեալ ծովակն , և զգաղտնի դուռն ի բրդան ,
Հաղձեալ մտին ի վերամբարձ Կախաղանեայ բուրաստան :

Պարոյր դիմեաց դէալ յայն անկիւն ուր օրիորդք ծածկեցան ,
Ետես զերիս ի դալարւոջ դի մերձ ի մահ անկեալ կան .
Վաղեաց յառաջ նախ Կիաքսար ի կեանս կոշել զիւր դստրիկ ,
Ասլա ի նոյն և Բելեսի միսեաց զձեռն ողորմիկ :

Պարոյր Ամբակ ի միասին փութան ուր կայր Աստարակ ,
Տեսին զի էր զիակնացեալ : Թարմիկ ոստոց ի փայտէ
Երեք դադաղ յօրինեցին : Տասն այր բարձին զմէն մի դին ,
Դարձան ոմանք թախծեալ սրտիւք , ոմանք յուսով ինդադին :

Նախ ի բանակ դաշնաւորաց բերին զմարմինս կարեվէրս ,
Թէ Կիաքսար , թէ Բելեսի դարմանէին զդստերս ,
Այլ մինչ Պարոյր կամէր դէալ յիւր ի բանակետը հեռանալ ,
Կիաքսարայ զխորհուրդ իւր ստիսկեցաւ մերկանալ :

Ասաց . արքայ՝ Մարաց քաջաց , երկու բանակիք միացան ,
Հեռի էին բանակք արեացգ՝ չեղեն միմեանց օդնական ,
Այլ արդ փոխեա զբանակետղդ , դէալ ի հիւսիս նինուէի ,
Ուր կայ բանակ Արամազնեայց , մայր քաղաքաց անդ անկցի :

— Զարմանամ յոյժ՝ զի դու տաս թոյլ արձակել զանցս պաշարոյ ,
Նինուէ մնայ անպարտելի դտեալ համբարս կերակրոյ .
Եւ դաշնաւորք զեղեալ ի նա՝ տացեն այնքան զօրանալ ,
Մինչե կուռովք մեք ձանձրացեալ հարկադրեսցուք ի բաց կալ :

— Ոչ, Կիաքսար՝ այդ ամենայն զբացել զըրաւ հակառակ։
Առ զըլորումն քաղաքամօր շատ լիցի և մի եօթնեակ։
Դու զիմ պատուէր՝ տուր հըրաման՝ Ճիշդ կատարել ձեր զօրաց,
Զամենայն ինչ պըսակեսցէ անակնկալ կատարած։

Թող արդէն իսկ ի տեղոջէս շարժեսցի ձեր մեծ ճամբար,
Երկու զինուորք զմի զիակ բարձցեն անշուշտ դիւրաբար։
Տարցին յայնկոյս ընդ դաշտն համբուն, և կուտեսցեն առ զետով,
Ընդ մէջ Հայոց բանակետեղ և Նինուէի ապահով։

Զայս ասացեալ մղեաց զՀայս զիակնաբարձս Աստարանեայ
Հասոյց ողջամբ ի բանակ իւր, և յանձն արար Ամբակայ
Տանիլ զզիակն մինչ ի Նինուէ, ծանուցանել քաղաքին՝
Զի փութասցի Սարդանապաղ առնուլ դստեր իւր մարմին։

Մինչ կատարէր Ամբակ զայս դործ՝ Կիաքսար և Բելեսի,
Փոխագրեցան զօրօք հանդերձ առ Հայս ի կողմ հիւսիսի։
Եւ զիականց շեղջակուտեալ լեռնակարկառ դիզաբարդք
Ցուցին եթէ որքան էին զոհք բանակացն բազմամարդք։

Զբաղեալ կայր Սարդանապաղ ի ուղ միակ իւր դստեր,
Եւ չէր հասու՝ թէ արտաքոյ Պարոյր Հայկալն զինչ նիւթէր,
Զօրք Սարաց և Բարելացւոց խորայատակ խրամ պեղեն,
Զհող հանեալ ի բըրածոյն՝ բարձր և ամուր թումբ կանդնեն։

Այս խրամ և թումբ կիսաբոլոր հանդոյն որմոց շուրջ սկատեաց,
Զարեւելեան հիւսիսակողմն անմատոց այն պարսպաց,
Եւ մինչ խրամոյն յաւարտ եհաս յոդնատաճան այն մեծ դործ,
Անքուն հանձար Պարոյրայ ոչ ժուժեաց լըսիկ կալ անդործ։

Զերիս բանակս պատաղեցոյց ի կոտորել զուրենիս՝
Զորս ի դարուց իւրոյ բղխման սնուցանէր ծերն Տիղըիս,
Փոխագրէին հատեալ ուռիքն և մանաւանդ զիշերայն,
Դէպ ի Ղակիշ հայկաղնէից՝ ուր Պարոյրայ կայր խորան։

Հրաման արար քաջիկ Պարոյր զի զդիակունս անկելոց ,
Հիւսեսցեն Մարք , Բաբելացիք ընդ արմից ուռեաց և ոստոց ,
Իւրաքանչիւր ծառ շուրջ զիւրեւ ունէր դիակս տասնաւոր ,
Եւ ծանրութիւն նոցին կշռէր լտերս բազում հարիւրաւոր :

Յորժամ այսպէս պատրաստեցան ծառք դիակամբք պատուաստեալ ,
Պարոյր կարդ եղ ի մէջ զօրաց , Բաբելացիք զպատատեալ ,
Բեռինս բերեն և տան Մարաց , Մարք ձեռն ընդ ձեռն տան Հայոց ,
Հայք զետեղին ի նեղաղոյն անցս ինչ զետոյն դէմ ջըրոց :

Նախկին պատատք դիակնակոյտ շաղիղակիր ուռենեաց ,
Գոյէ յանդէտս զոհ մատոցան դից Տիղրիսի սըրընթաց ,
Այլ յորժամ մին , երկու , երեք զետեղեցան քաջաղիր ,
Այն յանդիման երեեցաւ յոյս Պարոյրայ անպատիր :

Հետզիետէ կըորդեցան շաղղաց տրցակ ընդ տրցակ ,
Բաբելացոց և Մարաց դիք խրցին զայն գուռն լայնարձակ ,
Ընդ որ Տիղրիս ճեմեալ ճեպէր առեալ ընդ իւր և զեփրատ ,
Յօրէ յորում առ զիւր ծագումն յեղեմականն ի դըրախտ :

Եւ զի՞նչ : Հանդէալ Նինուէացոց յարեելից քաղաքին ,
Երեեցաւ ի դիականց նմանութիւն ինչ ճախնին՝
Յորում ծառք և երփնազարդ թուփք լուղան ի ջուր լըճայեալ ,
Զուրն խիթացեալ զառնայ ընդ կըռանկն՝ ինքեան ողի այլ ինդրեալ :

Աստ իփսեցաւ աշխատութեան զօրաց ձեւ և նպատակ ,
Տիղրիս ճեպէ լինել նոցին ծանր ճղնութեանց օժանդակ .
Լընու ջրով խոխոջաղին զխրամն այն նորակերտ ,
Զորով յելեկն զային ի ծաղը պարետք բրդանց հրաշակերտ :

Ո՞չ : Այն ինծիղք խուսափեցին : Դիակոնք և ուռենիք՝
Անսլատսպար մերկ Տիղրիսին եղեն յատակ և տանիք .
Հիւսիս փշեալ զիւր զովարար շունչ ի բանակ Հայկաղանց
Տայր ի Նինուէ զգարշահու նեխսեալ զողիս դիականց :

Տիգրիս հոսեալ մինչ յայս նոր որմն զիւր քաղցրիկ ջուր՝ խոտորէր,
Դէպ ի խրամն՝ յար աչ բըշաց զքաջ ծերունին հրաւիրէր,
Այլ դիմութիւն՝ որ զողուղի ընդ զիականց շար քամի-ը,
Նինուէ այսոց հին թ զազրահոտ և զարշահամ ընձեռէր,

Ընդ զողուղիս ճզնէր Տիգրիս տանիլ զիւր ջուրս դրախտածին,
Բայց չէր այնուէս ի Հայաստան՝ ուր կըէր կոհակս սկտղածինս,
Ի Միջագետու տեսեալ զայլ կրօն, զայլ ազգ, լեզու հայհոյին,
Ճեսլէր ծածկել ի ծոց ամրսից զիւր ջուրս այզեաց ուռողիչ:

Նմա զողուղի անցս անձկապոյնս պեղեալ էր բան Պարոյրայ,
Յատակ խրամոյն դէպ ի Նինուէ ունէր ակօսս ընդ երկրեայ,
Ընդ այն առուս զաղտաղողի տողորելով ջուր տակաւ,
Զստորերկրեայս բարձր պարսպաց առնէր աամուկ և խոնաւ:

Ընդ փոյթ հասին ջուրք Տիգրիսի ի մակարդակ այն երկրին,
Ուր հողակոյտ կարկառք դիզեալք հարուստ թմբից հիմն եղին,
Ջուրք սկսան թանալ զկաւն՝ որով մածեալ էին վէմք,
Գամ քան զդամ իւր տամկութեամբ՝ և որմք ցուցան այլադէմք:

Բազում ուրեք ի սկարսպին երեւեցաւ ջուրց կայլակ,
Նախ առաջին շուն մի եղիտ զովացուցիչ ինքեան լակ,
Յետոյ կարօտ ջրոյ մարդիկ՝ զորս ծարաւոյ տանջէր պասք,
Յարմարեցին անդ զծորան՝ զի ջուրք իցեն դիւրահասք:

Ծաղէր դարձին ի մի բանակ դաշնակցաց օր եօթներորդ,
Ահա Մասիս պարուրեցաւ ի մուայլ և մէդ թլփոյորդ,
Որ որպէս ծուխ ի վառ հնոցէ վերամբառնայր մինչ յեթեր,
Թանձր մառախզով շամանդաղեալ ծածկէր և զօդ և զայեր:

Ծուխ մերթ զլեալ վերուստ ի վայր՝ բուրէր անոյշ հոտ խնկոց,
Որոտաձայն հնչեր բարբառ խօսից մարդկան և երդոյ,
Սըրինդ, տաւիդ, թմբուկ, փանդիւն՝ նուագարանք մեր հովուաց,
Եւ կայթ և ծափ, կաքաւ և պար, և ոստոստումն հովուուհեաց:

Էանց տեսիլն դէալ ի հարաւ՝ ընդ Կոդովիա, Շաւարշան, Ընդ Աւարայր, Վասպուրական, ընդ Տոսպ, Ոստան և ընդ Վան, Ընդ Մոկացիս և ընդ Կորդրիս, անց և զերկիր Ամատեայ, Եկաց յայնկոյս Տիգրիս գետոյ ի բլրի որ հանդէալ կայ:

Փարատեղաւ և ծուխ և մէդ. երեեցաւ. Հայկ բազմեալ, Ի լուսակերտ լերին բարձու՝ հանդոյն Մասեաց վերացեալ, Որպէս տեսաւ յԱզատ Մասիս, նոյնալէս և յայս տեսարան, Զոր լուսափայլ ամակք այգածին առ ի կազմել դիզեցան:

Կայր Լուսընթագ դարձեալ բազմեալ ծեր ամուսնոյն յանոտից, Առ այս նուագ ի դէմն նորա ոչ երեէր ինչ թախիծ, Մշտադարուն իւր մանկութիւն պտուղ անրիծ իւր կենաց, Բիւրապատիկ առաւելուն զփաղփիւն նորին երեսաց:

Սյլ այս փաղփիւն էր ի Հայկայ՝ որպէս յԱրփոյ՝ ի Լուսին, Շերն իմաստուն պՃնաղարդէր երրեակ Շնորհօք զանձն Հարսին, Որոյ որդիք, դստերք, հարսունք զարդարէին զշայաստան, Որպէս ծառոց շարք զդիւթեալ կախաղանեայ բուրաստան:

Հայէր հեռուստ Հայկ զուարթաղին ի թոռնեակ իւր ի Պարսյր, Որ ընդ այդուն կանխեալ վաղքաջ վառէր կազմէր զբանակ իւր, Յանկարծ մերժեալ զիւր ժակա քաղցր հայէր ի վայր ակնկոր, Արտեանունք իւր արկան քող աշաց՝ որ վննէր զանդունդ խոր:

Արտեանունք՝ յորոց մէն մի ալէզարդեալ մազ սրածայր, Ահեղասաստ շանթ կայծականց, որոտալիր հրատ տեղայր, Եւ դղրդիւնք զլմանց նոցին հարկանէին զդողանի, Զիսաշնարած հովիւ, մարտիկ, և զելուղակ վայրենի.

Զքրտնավաստակ մշակ այդւոյ, զինդրակս վայրի դազանաց, Զկարթընիէց որսորդ ձկանց՝ զտիրող ցանցից ուռկանաց, Զաներկեան ուղղիչ նաւոց ընդդէմ ալեաց, յորձանաց, Զդիմագրաւ արհամարհիչն փոթորկածին փորձանաց:

Զցցասացն ի հարսանիս, զորդարկուն մեռելոց,
Զերդաբանիչն ազգասիրաց՝ վասն հայրենեաց անկելոց,
Զվերնասլաց դիւցազներգակն որ առ նոյն ինքն Հայկ ուղղէր,
Զիւը զովեստից տարփող ներբող և զնա կարող դաւանէր :

Կալեալ զհերաց Արեղական՝ յուշիկ ածել յանկողին,
Տարածելով յերես նորա զհանգստեան հովանին,
Սուզել զնա ծովուն ի խորս՝ որպէս ի զով աւազան,
Ի լուանալ զերես պայծառ՝ որպէս և մայր զիւը մանկան .

Խոստովանէր թէ նա յենու իւր կըկոցաւ զառաւօտ,
Իբրև փոշի զերկնաւ ցանէ զեղեամն, զպարդ, և մէդ յօդ .
Դիզէ զձիւն որպէս զասր, իբրև բամբակ սպիտակ,
Թեթև զզեալ, զտեալ մաքրեալ՝ հանեալ զյետին բիծ, սլիսակ :

Ակնկորել Հայկայ՝ հրաւէր Ազատ Մասեաց էր Քաջաց,
Արք յակնարկել նորա խմբին յիւրաքանչիւր ի վայրաց .
Ահա հասին, շուրջ զնովաւ՝ կացին որպէս յայնմ աւուր,
Յորում Ներբող լնդդէմ նորա մերկեալ էր զիւր զէն և սուր :

Զայս երախան դիւցազնահոյլ Քաջաց Մասեաց ժողովէր,
Զի յայսմ աւուր իւր թոռնեկի յաղթանակի տօն առնէր,
Կամէր զի այն պարզակենցաղ չքնաղ Պարոյր Լիւտիբրեան,
Հանցէ ի մտաց՝ զոր սերմանեաց՝ Կախաղանեայ բուրաստան :

ԶԲարիլոն և զամենայն հրաշակերտս այնց ազգաց,
Եւ զնինուէ՝ և որ ի նմա զարմանալի զործ ձեռաց,
Կանգնեալ է աշ արիւնաներկ, իւրաքանչիւր վէմ նորին
Մկրտեալ է դառն արտասուօք, բիւրաւորաց կենաց զին :

Ո՞՛ թէ որքան անէծք որբոց կան ի հիմունս Նինուէին,
Որքան թառանչք խոցեալ սրտից այրեաց թառին ի նոսին .
Քանի հարսունք զմահ փեսայից կոծեցին անդ աղեկէղ,
Քանի ծնողք որդեկորոյս խարուկեցան բոց յանկէղ :

Հասեալ կան արդ աւորք վրիմոց, կշիռ կառուցաւ հատոցման,
Կայ Նինուեի քամել զմբոր դառն բաժակիս բարկու թեան.
Օրհաս մուծցէ ի հունձ նորին արծնեալ մանղաղ, զերանղի,
Մահ իւր անզով եռաժանեաւ հարցէ զծնոնդս արկանղի:



Լրուե՞ս՝ զուսան Հայաստանի բամբռասաց դու Գողթնական ,
Ոչ աեսանես զի կերկերի կոկորդ ծերոյս չուառական .
Ծնղին միտք իմ անկարացեալ յիշողութեան թուլութեամբ ,
Զաշս ի խըտիդ զըրդըռէ լոյս Հայկայ ի փառս իւր փայլմամբ :

Հաս յօդնութիւն՝ հին բարեկամ՝ ընդ օրում երբեմն երդէաք
ԶՀայկերդին հնասաւեղծութիւն , զՆրամերդին վեպ փանաք ,
Զննուշավան Սօսանուէր , զԽղճուկ մահ Պարէտի ,
ԶԶաւանէ, Փառնակ, Սուրեւ Վաշտակ, Կարև Զարմայր ընդ Շաւարշի :

Յուշ արդ ինձ ած՝ սիրեմ՝ զմօրուոդ՝ Գողթնացի իմ ձայնակից ,
Թէ զառաջինն ովլ մերձեցաւ մեր նախահօր ի մնարից ,
Մինչ նա ձգեաց զարականունս աշաց փայլուն՝ վարագոյր ,
Եւ հրաւիրեաց յայն հանդէս՝ ուր ուներ սկսակել զիւր զարոյր :

— Է՞ր ո՞չ յիշես՝ այ բանդադուշ՝ թէ մի է միշտ կարդ Մասեաց ,
Միշտ այն կարդաւ համախմբին՝ որսէս յաւուր տիրալաց ,
Յորում որդիք , եղբաբք Հայկայ՝ մատնել զնա խորհէին ,
Եւ սասանել զվէմ անկեան հաստատութեան Հայ աղդին :

Նախ Ասքանաղ վեհն զիւցաղանց փեսայացեալն Աստղկան
Հանդիսացաւ պարագլուս եղբօրորդւոյ օդնութեան .
Եւ նըմա էր ընթացակից քաջն Արմենակ անդրանիկ ,
Նախաղըրաւ շահատակեալ ծընողին իւր զօրավիդ :

Յուշ իւր եքեր Մայր Լուսընթաղ զահեղասատ օր ռազմի ,
Յոր նահատակ հանդիսացաւ Կաղմոս իւր թոռն քաջարի ,
Եհարց ցորդին իւր Արմենակ , ուր է քաջ իմ Փայլածուն ,
Է՞ր ուղեկից չէ արդ նա քեզ , որպէս և էր միշտ հաւոն :

Առ այս արար քաջն Արմենակ զայսօրինակ սպատասխան ,
Խմբեալ էաք յԱրագած լեառն՝ ուր կայ կանդուն իմ խորան ,
Զրոյց առնէաք վասն Պարոյրայ և վասն նորին յաղթութեանց ,
Զորս նա այսօր հանդերձեալ է առնել ի փառս Հայկաղանց :

Եհա յանկարծ յամողոց բարձանց անպարտելին Մանաւաղ ,
Ընդ խոռ եղբօրն սահեալ եկաց՝ ուր կայր արդէն Ասքանաղ ,
Այսպէս էր լեալ և յայնմ աւոր՝ յորում եղաւ բել կործան ,
Սոքա երկուք Արմենակայ զհետ չոքան միաբան :

Զկնի սոյա Կաղմոս , Կարդոս՝ որպէս ջրմուղ քարավաղ ,
Ի վայր հոսին յամոց վերնոց կալ զօրհասէն դատախաղ ,
Որ ո՞չ ներէր յաշաղանօք՝ լնդդէմ բաղդին՝ Պարոյրայ ,
ԶՇամիրամ , բէլ և Նինոս մասնել ի ծաղր բաղմօրեայ :

Շարժեաց Հայկ հայր զարտեանսոնս , զՊարոյրս ամազոց ցնդեցոյց ,
Անթիւ , անհուն նախնեաց քաջաց զերամն ի մի խումբ եցոյց ,
Անդ ի դադախ լերին բարձու ողարէր ի լոյս օդաղնաց՝
Արամն (Արէս և Արամաղդ)՝ փառք և սպարձանիք մեր նախնեաց :

Այս մշտայաղթ դիւցափառ վեհ՝ մրցարանաց սկետ սպաշտան ,
Որում Մըշակ դարբնէր Մասեաց յընդերս շանթիկս կայծական ,
Տեսեալ զի զայր իւր Համասփիւռ , և իւր աղեղն զմիջաւ ,
Ճեպէր նմա ձեռն կարկառել և շորջ սպասել այն դօտեաւ ,

Որ ծիրանւոյ և երփնազել լուսոյ փայլմամբ փողփողէր ,
Եւ զբաղմավիշտ հարսն իւր լնտիր ծիածանու զարդարէր ,
Եւ որոյ քօղ անգայտ կապոյտ աստեղանիշ էր նկարեալ ,
Եւ վերջաւորք ոսկիափունջ քըստիւք էին սպաճուճեալ :

Ի հանդիպոյ զայր զեղանի Արայն տքեւ լուսարփեան ,
Եւր կարմրերփեան զանձամբ արկեալ ծաղկահիւսեակ պատմութան ,
Այս՝ յիւր արեան էր թաթաւեալ յաւուր մեծի աղոնի ,
Բոսորափայլ ներկեալ ի դոյն՝ որպէս դինեաւ հնձանի :

Զդնայր նուարդ անմըխիթար տիկին զհետ անձկալւոյ ,
Որ դիտակաւ կերտէր զժամս լիալուսին դիշերոյ ,
Երկաքանչիւր թէպէտ նովին շաւղաւ առ կէտ ընթանան ,
Այլ ժամանեն արտակեդրոն և զուզուղի հեռանան :

Թառանչ բաղխեաց խորոց հոգւոյն զդուուն ի սրտի Ֆօր նախնոյն ,
Հըրաշակերպ Լուսընթաղի՝ Հայաստանեայց Հին հանւոյն ,
Ասէ , ո՞ տայր ինձ տեսանել զայն ուրախ օր աւետեաց ,
Յորում նուարդիս դիցի զըրաւ արտասուաց և վերջ լալեաց :

Զցայդ և ցերեկ այս զաւակունք իմոյ ամրիծ արդանդի ,
ԶՇամիրամայն ինձ յուշ առնեն նախանձ և հեռ մոլեզին ,
Անսփոփ զուր թափառելով ի դաշտս , ի մարդս անդադար ,
Ինձ սատարեն վիշտք անփարատ և ցաւ յոդիս չարաշար ,

Յանկարծ մատեաւ Գերկեթ չքնաղ՝ Սօսանուէրի ամուսին ,
Լուսընթաղի փարեալ ընդ դիրկ՝ զայս խօսեցաւ առ Հանին .
«Միթէ մայրիկս ատելութեամբ դտաւ Արային կենախուզ ,
«Նմա մահառիթ եղեւ իմ մօր առ հրաշագեղն սէր անյոյս .

«Օրէնք աղզացս Միջագետաց անխոչ անխութ թոյլ տային ,
«Քաջ դիւցազանց ձեռնհասից ճոխոց լինել բաղմակին .
«Ուրախ լինէր մայրս Շամիրամ արժանանալ այն փառաց ,
«Զի նուարդայ ի տան լինէր մի յոգնաթիւ նաժշտաց :

«Միակնութիւն էր առանձին հիւսիսայնոցդ շնորհեալ ,
«Եւ ես յայդ իսկ էի միայն սիրով հոգւոյս կաթողնեալ :
«Զի իմ լիցի ընուշավան , և իմ նորին հարսնութիւն ,
«Եւ այս պայման զօրեաց խղել ղնետին անդերծ զերութիւն :

«Մայր իմ չե ևս լքեալ զտիս իւր մանկական հասակի ,
«Դիպուածով իմն հիւր եղե տան՝ դիւցաղնական Արամի ,
«Ետես զորդին Համատիւոի , ետես զԱրայն միածին ,
«Մինչ չե Նուարդ ի հարսնութիւն էր հրաւիրեալ դեղեցին :

«Ի կանանոյ ծեր Աենոնի էտնոց ի յարկո Նինոսեան ,
«Պասքէր վըջիտ դալար սիրոյ , տենչայր սիրոյն Արայեան ,
«Յուռութուլունք սատարելով պատանեկաց լար մըտաց՝
«Ի լերդակողմ հարեալ զայրին մղեցին ի վարմ որսորդաց :

Մինչ զայս խօսէր Դերկէթ դշխոյն՝ տիկին Նուարդ մերձեցաւ ,
Դիրկո արկ նըմին , ասաց՝ հաշտ եմ ընդ մօրդ՝ հարսն ամենալաւ ,
Համբիկ գտտրիկդ ընդ Պարէտի սէր տարրացոյց մ. ջ յաղդաց ,
Այլ զայն ցնդեաց Սարդանապաղ յանձն իւր կոչեաց զայս հարուած

Մայր Լուսընթագ դարձաւ բանիք առ վեհ ծնողն դիւցաղանց :
Ասէ . ծանեայ զի ըղձալի սըրտից , հոգւոց , իմ թուանց ,
Է՝ զի տացես Միջաղետաց քամել զմրուր բաժակի ,
Զոր ետ օրհաս ըմակել երբեմն քանանաձետ հէղ ազդի :

Զօրութիւնք որը ի Սոսիս անդ Արմենակայ հանդչէին ,
ՅԱրակածէ պար բոլորեալ՝ դէպ ի Նինուէ Ճեպէին ,
Ի քարակառը նորաւանդ անդ՝ ուր կար Հայկայ արդ խորան ,
Սնհուն խմբավք առ այս հրաւէր նախահաւուն խոնեցան :

Լուղնիմադի բան աղերսից եղե Աեհին լըսելի ,
Ասէ . Հարսն իմ մշտակարուն՝ քո կամք այսօր պսակեսցի .
Միջաղետաց՝ այն՝ չե Է՝ լիակատար հատոցեալ ,
Աւրձ զոր օրհաս իմաստութեամբ՝ է վասն նորա հանդերձեալ :

Այսօր Նինուէ՝ զոհ հաշտարար՝ ի սեղան իմ մատուսցի ,
Եղն պարարակ Սարդանապաղ բոլորակէղ ձօնեսցի ,
Խսկ Բարիլոն ոչ խսկ և խսկ : Ունիմ զայն այր յիմում տան ,
Որ յիս կարուց և զբարիլոն ունի բերել յիմ սեղան :

Պարք համբարուաց հնչեցին անդ սովորական զերպ այդուն ,
Որ ի պատիւ յաղթանակի էր յօրինեալ մեր Հաւուն ,
Պատկերանայր ճակատամարտ դէմ ներրոդայ յաղթական ,
Որով յափունս Աղթամարայ ի վէմ հիմներ Հայաստան :

Ընդ երդեկցաց քաղցը առաջմանց հնչեցին ձայնք սըռընգաց ,
Յիւրաքանչիւր քարանձաւաց , ծերսլից , ժայո ից և վիմաց ,
Ուր նախնուոյ մեր պար դստերաց քսանեչորս լուրջ ժամոց ,
Մըթերեալ է զիւր նուաղաց կազմած ի պէտս մէն պահուց :

Յորս անցնիւր սլահէր զիւր պահ մէն մի ցայդոյ , ցերեկի ,
Կոկ զմացորդ ժամանակի պար բոլորեալ ի խումբ մի ,
Ի ցոցս , ի կայթս , յար համակին ի թես թիթուանց խնդաղին ,
Զձիւնաղակաթ լերամբ զտիւ և զդիշեր զբօնուին :

Զարթոյր նինուէ ի քաղցը քնոյ՝ զոր սփուեալ էր այն գիշեր ,
Եւ նուաղաց որ ի հիւսիսոյ անձնատուր լեալ զմայէր ,
Թէսլէտ հնչիւնք թմբկաց փողոց էին Հայոց սեպհական ,
Բայց թուէր նոյա՝ թէ համակ վէմք փոխարկեալ են յերկարան :

Դէսլք ծանուցին նինուէի թէ բանակ Հայոց կայ վառեալ ,
Սմենեքին զեղան արտաքս՝ ի սուր ի զրահ կուռ զինեալ ,
Սարդանապաղ բիւրուք իւրովք կամէր կըկին յարձակէլ ,
Յարկեմաեան դըրանց յանկարծ ի Հայ-բանակ զեղանել :

Յաջողեալ էր նըմա երկիցս այս եղանակ յարձակման ,
Որոց նախկնով ջնջեաց զողցես զահեղ բանակ բելեսեան ,
Եյլ արդ վըտանգ նոր սպառնայ՝ որ չէր յերեկն և յեռանդն ,
Բաղմապատկի թիւ աղբերաց , և ջուր յորդէ յորձնեռանդն :

Հակաւ խմբին սովառազէնք՝ որք չեն ի թուոյ այնց բիւրոց ,
Որովք կամէր Սարդանապաղ ճնշել , ճմլել զօրս Հայոց ,
Իւրաքանչիւր ունի զիւր կէտ պահպանութեան պարսպի՝
Որ ի մարտկոցս , ի նետակալս , կամ ի սլատնէշս սյատուարի :

Գամ քան զդամ խոնին վաշտիւք, լնուն ղինակրօք աշտարակք, Հոծին մարտկօք և խրտանան բրդանց բարձանց ամբարտակք. Բայց տակաւին կան բաղում բիւրք որք չեն յաղեալ ի քընոյ, Յառնեն տակաւ և կաղդուրին ուտելով հաց ընդ պինոյ:

Ասկա յուշիկ դէալ ի հիւսիս ղընթացս ոտից իւր ուղղեն, Եւ ընդ քարեայ սանդուղս ստուարս ընդորմն ի վեր ելանեն. Այսպէս հանդոյն մրջմանց զեռան ընդ թանձրութեան պարսպին, Մին կանայք, ծերք և հիւանդք մընան ի տունս Նինուէին:

Նինուէացիք՝ որք խոնէին արդէն ի գլուխս պարսպաց, Միայն զերկուս տեսարանաց ունէին դէմ իւր աշաց, Միայն էր բանակ Հայաստանի վառեալ ընդդէմ Նինուէի, Եւ երկրորդն էր հարուած զոր տալ կամէր Հայոց՝ Ասորի:

Դեռ թարմ կայր այն ի յիշատակս Նինուէացւոց տեսարան, Զոր մրցակիրթն Սարդանապաղ կրկնապատկեաց յարշաւան, Յորժամ խիզախ զօրք քաղաքին ածին ի զօրս Բելեսեայ, Զայն կոտորած՝ զոր չէր կրեալ երբէք բնաւին ազգ Քաղդեայ:

Փող հնչեցաւ յորդոստայի լայնածաւալ Նինուէի, Սարդանապաղ զարեմաեան երաց զդուռն քաղաքի, Գունդ զունդ ելին զօրք Ասորեաց ի տափակողմ լայն դաշտաց, Աւր մի ամսով քան զայն կանուխ լեալ Բելեսեայ էր հարուած:

Այլ արդ ոչ գոն անդ և նշանք աւերակաց, հրդեհից, Կանաչ բանջար ծածկեալ ունէր զհամայն ահոկս խանդարից, Շաղկունք կարմիր, դեղին, կապոյտ, սոլիտակ ի մէջ դալարւոյ, Շիծաղախիտ այդորէին զպայծառ ծագումն լուրջ արփոյ:

Ո՛չ շարժէին յիւրեանց տեղեաց բանակ Հայոց և Պարոյր. Կայր Ասորեաց դէմ կիաքսար և Բելեսի և բիւրք իւր. Իսկ քաջք Մարաց ի դարանի հսկեն հանդերձ քաղդէիւք, Զի ի Նինուէ սըպրդեսցին զինուորական հընարիւք:

Խիղախ դիմէր Սարդանապաղ զկիաքսար հարուածել .
Ընդ խմբեցաւ ճակատամարտ՝ ուր Ասորին ի դաշտ ել .
Պարոյր կամէր զի հեռասցի Սարդանապաղ յայց դըրանց ,
Այլ նա զզոյշ էր ի լարից սուտ և խարդախ պարտութեանց :

Մարտնչեին զօրք Ասորւոց ընդ զօրս Մարաց ուժգնակի .
Դիաթաւաղ գըլորէին նախագըլրաւք ի մարտի .
Պարոյր ստէպ հայելով յետս զաշս իւր յառէր ի հիւսիս ,
Ուր յամպս ի վեր նկարագրէր լուսաւեսիլ սար Մասիս :

Պարոյր չունէր ոչ զէն , ոչ սուր , ոչ զեզարդ և ոչ վահան ,
Յաջ իւր փոխան Գայիստնի կայր նետ Հայկայ տիգանըման ,
Դրօշակիրք իւր կան առ նըմին , ոսկենըկար աղաւնիք ,
Բուշին ընդ օդս զգլիսով նորին , յորոց սարսին Ասորիք :

Այս աղաւնին շիւղ ի բերան դարձաւ երբեմն ի Մասիս ,
Այլ քանիցս յետ Ծրայի ճախրեալ եհաս յԱսորիս ,
Այսօր հանդէպ կայ Նինուէի անմեղ թոշունն օդասլաց ,
Որ հանդերձեալ է տալ զըրաւ՝ Շամիրամայ աղաւնեաց :

Եւ ահա այն հրաշանըշան տեսարան՝ որ երեւէր ,
Ընդ արշալոյսն առաւօտու իրր խաբուսիկ իմն ստուեր ,
Յարփիական ճառագայթից լուսաւորեալ զուարթագին ,
Բարձրացաւ յօդս և յանդիման եկաց աշաց Նինուէին :

Միօրինակ հիանային քաղաքացիք և զինուորք
Եւ որք ի բուրգս և յաշտարակս կային խոնեալ բիւրաւորք ,
Սարդանապաղ և Կիաքսար և Բելեսի բանակօք ,
Տեսին զւայկ զի հասեալ կայր իւր դիւցաղնեայ զաւակօք :

Երդէն Երփին լուսապարզ և անցեալ էր ընդ զետ Ցիղրիս ,
Եկեալ հանդէպ տեսարանին՝ որ նըկարէր զՄասիս ,
Զի Լուսընթագ ձայնեաց «Պաբնյը՝ թոռնեակդ իմ սիրական ,
Զաջդ կարկառեա դէմ Նինուէի ի վրէժ արեան Արայեան :

Ամբարձ Պարոյը զաջն իւր ահեղ, զինեալ նետիւ նախահօք,
Եհա պարիսպք հիւսիսային յերկիր անկան թաւալգլոր.
Եւ այն խուժան որ զմայլեալ կայր օդերևոյթ նըշանօք,
Ճիչ ամբառնայր ահասարսուռ՝ ճմլեալ յանկարծ փլատակօք :

Խուժեաց անդրէն Սարդանապաղ յետո ի քաղաքն ընդ զօրաց.
Ընդ նոսին Մարք, Բաբելացիք խառն ընդ բիւրոց Ասորեաց.
Փախուստ, կոիւ, խիզախ արշաւ մարտ և հարուած, ճապաղիք,
Հայեցողաց յողորմ տեսոյն զալարին սիրուք և աղիք :

Ոչ դադարի խոցուած և մահ, կոչիւն, կանչիւն, դղրիիւն,
Կոծ, ողբ և սուզ, թառանչ, կառանչ, վայ և եղուկ և շաշիւն,
Արդեօք շուրթն էր Լուսընթագի զանեծս նըմին կարդացեալ.
Զի ի միում աւուր տեսցե ի զլուխ իւր դիզայեալ :

Զորբոթիւն և զայրիութիւն, զկոտորած զուակաց,
Զկական և լաց անբալդ ծնողաց, և զղերութիւն որդեկաց,
Զհռնտիւն վիրաւորաց, և զհեծութիւն խոցելոց,
Չեղիր աւաղ օրիորդաց, զանկումն հարսանց վարելոց :

Կորոյս դիւր յոյս Սարդանապաղ, կատարեցաւ հին պատկամ,
Տիգրիս յընթացս իւր մոլորնալ զեղաւ ի ներքս տարաժամ.
Չունէր ժառանդ իւր աթոռոյ, մեռեալ էր և Աստարտէ,
Յափրացեալ էր գինեաւ կենաց, յազեալ պժդեալ յաշխարհէ :

Եմուտ թախծեալ յիւր ապարանս, համախմբեաց զարքունիս,
Զտիկնայս, կանայս, հարճս, օրիորդս, զաղախնոյս և զներքինիս.
Եսէ՝ որ ոք մահակցի ինձ՝ կացոյէ յիւրում պաշտաման,
Իսկ որ կամի զկեանս իւր պահել՝ հլցէ աչացս յանդիման :

Ամենեքեան միարերան ասացին, ո՞ղջ լեռ՝ արքայ,
Ընդ քեզ կեցաք, ընդ քեզ մեռցուք, շեմք մեք այնքան անզդայ
Զի յայսմ աւուր՝ մինչ դու դնես զկեանս քո ի կըշիու
Վասն կենաց մեր հայցեսցուք ի դաշնակցաց զայլ վըճիռ :

Զայս ասացին . և ինքն արքայն Սարդանապաղ բորբոքեաց ,
Եւ ի խարոյկ բոցակիզեալ խոց կարեվէր զանձն հոսեաց .
Հրդեհ կալաւ զանցս ամենայն , զլուսամուտս և զդրունս ,
Ծուխ հեղձամահ կորոյս զնոսա , և հուր մաշեաց զդիակունս :

Ի դարպասէն դեպ ի քաղաքն ծաւալեցան հուր և սուր .
Հայք յառ յաւար յարձակեցան , ի կոտորած Մարք անլուր ,
Բարելացիք մուրճ ի ձեռին կործանէին զկերտուածս ,
Հազարամեան շինուածք ահեղ զըլորէին յաւերածս :

Եմիս ողջոյն յերկարեաց այս . Հայք Ճոխացան աւարօք ,
Մնայր նոցա արդէն դառնալ ուրախութեամբ և փառօք .
Վասն այն յորժամ էանց ամիսն՝ կիաքսար և Քելեսի ,
Յաւերակս անդ ապարանից բացին ակումբ հանդիսի :

Իսկ Հայկ և իւր Ճոխ զերդաստան՝ որ լուսակերտ ի Մասիս ,
Որ ցարդ մերձեալ կայր ի բանակ , արդ մերճ զըտաւ ակրմբիս ,
Ուրախութեամբ հայէր յայս նոր վասն իւր ազդի տեսարան ,
Ուր զլուխ Հայոց նահապետի առնոյր զխոյր տիրական :

Ի մէջ այնքան Ճոխ աւարաց՝ զոր Հայք էին կողոպտեալ ,
Եւ ուստի մասն նահապետի և տան նորին որոշեալ ,
Կային եօթնեակ ոսկիաձոյլ գոհարայեռ զարդարանք ,
Որոց չէին Հայ զինուարաց յայտնի անգամ և անուանք :

Զայս եօթնեակ զարդս առ Համասփիւռ մայրն Արայի ի ձեռս իւր .
Եւ զերթ ի թես թեթե ամպոյն եբեր ի նուէր առ Պարոյր .
Ժպիտ շրթանց Համասփիւռի՝ սրաւացուցիւ ի դիւցաղանց ,
Հաճոյ զըտաւ Լուսընթագին նախկին մօր մեր Հայկազանց :

Եսաց . դստրիկ , ի խրախունս քո՝ Արամն իմ սիրական ,
Հինգ զարդ հնարեաց օրիորդաց ի ալէտս աւուր հարսնութեան ,
Եսկարանջան , դինդ և Քորոյ , դօտի ընդ մէջս մատանի ,
Զոր տայ հարսին ի նշան սիրոյն՝ փեսայացեալ պատանի :

Ծրդ Պարոյրիս եօթնեակ նուէր ի Ճոխութեանց ընտրեցեր,
Ինքնին ձեռամբ քո զղեցո՛, զի դու ես մայր արփւոյն մեր.
Զի զոր Սրայ պահեաց մաքուր, թէ և անծամբ իւր առուժեաց,
Զնոյն Պարոյր կրկնեաց փառօք, ոգորեցաւ և յաղթեաց:

Եւ Համասփիւռ եդ զասկարօշն խոյր ի զլուխ Պարոյրայ.
Ճուրջ զնովաւ շինդղ դոհարաց՝ թագ բոլորեալ մարգարաւեաց,
Սմենեքեան միաբերան դոչեցին՝ թէ «Ո՛Ղջ լիցի,
Կեցէ Պարոյր արքայ Հայոց, կեանք մեր քաջիկ արքայի»:

Առ Համասփիւռ մանեակ յեռեալ դոհար ակամբք զոյնզգոյն,
Ի սկարանոց արկ Պարոյրայ՝ կախեալ զլանջօք պատանւոյն:
Դարձեալ հնչեաց ձայն բաղմութեան. «Սրբայն Պարոյր ողջ լիցի,
Կեցէ Պարոյր արքայ Հայոց, կեանք մեր քաջիկ Հսկայի»:

Առ Համասփիւռ զանդամանդեայ դօսին պէճնեալ դոհարօք,
Եւ էած դայն նորապըսակ թագաւորին զմիջօք:
Երրորդ անգամ հնչեցին ձայնք «Սրբայն Պարոյր ողջ լիցի,
Կեցէ Պարոյր արքայ Հայոց, կեանք մեր քաջիկ դիւցազնի»:

Առ Համասփիւռ զգաւագանն ընդելուզեալ յակընթօք,
Եւ ետ ի յաջն նոր արքային՝ շրջապատեալ իւր բիւրօք,
Չորրորդ անգամ որոտացին, «Սրբայն Պարոյր ողջ լիցի,
Ուղղեցի իւր արքայութիւնն և շնորհաւոր եղիցի»:

Առ Համասփիւռ զոսկի դնտակն և ետ յահեակ Պարոյրայ,
Էր այս մի մեծ ոսկեխնձոր՝ մակագրութեամբս՝ Ցուն Հայկայ,
Հինգերորդ ձայն հնչեաց ամրոխն «Կեցէ Պարոյր մեր արքայ,
Կեցէ ժառանգն տան Արամայ, կեցէ պարծանքն տան Հայկայ»:

Առ Համասփիւռ զապարանչանս ականակուռ ի քարանց,
Էարկ իձեռոս նոր պարակցին Արամազնեայ դիւցազնց,
Այս վեցերորդ ձայն հըճուանաց դղրդեցոյց դըրջակայս,
Կեցէ Պարոյր մեր թագաւոր, կեցէ փառօք նոր արքայս»:

Առ Համասփիւռ զղինդն ոսկի և զմատանին պետական ,
Էարկ յականջս , և եդ ի մատն պէճնեալ ի զարդ պերճութեան ,
Եօթներորդ ձայն զուարճութեան դնդացոյց զայն քաղաք հին ,
Կեցցէ Պարոյր յուրախութիւն և ի պարծանս մեր աղղին :

Կեցցէ Պարոյր , կրկնեաց Արամ , ի փառս անուան իմ որդւոց ,
Կեցցէ Պարոյր ասաց և Հայկ՝ յուրախութիւն իմ Հայոց ,
Պարոյր՝ թէ թագդ արքայական կամիս ի գլուխդ զի կացցէ ,
Միտ դիր զարդոցդ՝ զորս զկեցար , և անձն քո միշտ կեցցէ :

Մանեակի Հանդոյց՝ որ զքեղ կապեաց անլոյծ կապով ընդ աղղի ,
Ազդ քո միայն պարտ է լինել՝ մերձ քան զայլ ինչ քում սրտի ,
Գոտին զքեղ զօրացուսցէ պահել զազդ քո արութեամբ ,
Զազդ քո ունիլ միշտ շուրջ զքե՝ որպէս զդօտին շուրջ զանձամբ :

Գաւազանդ այդ որ յաջ ձեռին , ոչ ի հարուած է տուեալ ,
Այլ որպէս ցուալ քո հովուութեան՝ յօղուա դառանցդ պարդնեալ ,
Գովաւ վանեա զդայլ դազանաց , հովուեա խաշանցդ ի դալար ,
Ճիպն դիր զի անդորր լիցին դատաստանաւ քո արդար :

Ոսկեղնտակն է աշխարհքս , և ի նըմին համազգիք ,
Բոլորեալ տամ զայն ի քո ձեռս , ամբողջ կացցեն հայրենիք ,
Սպարանջանքն վասն այն տուան յերկոսին ձեռսդ հաւասար ,
Զի ամենայն գործք քո ձեռաց իցեն պատշաճ և յարդար :

Գինդք , մատանին՝ վասն այն տուան ի միասին զզենուլ ,
Զի ականջք քո չընտելասցին չարալրութեամբ զբօնուլ ,
Եւ մատն քո զորմէ կախեալ կան մահ և կեանք իմ որդւոց ,
Զամենայն ինչ տնօրինեսցէ վայեշապէս ընդ ձերոց :

Դարձիր Պարոյր՝ ի հայրենիսդ , անդ է մայր քո Հայաստան ,
Մոռացիր զայն՝ որով թովեաց կախաղանեայ բուրաստան ,
Ի հայրենիսդ տար զբարին , զշարիս յանձնէդ թօթափեայ ,
Զէ պարտ զյուրին պահել յոդւոջ , բարին լիցի զարդ նորա :

Դուք Կիաքսար և Բելեսի՝ դարձեալ ընդ իս զոչեցէք ։
Զոր եօթն անգամ որոտացիք, ութներորդ ևս կրկնեցէք։
Կեցէ Պարոյր նոր թագաւոր, կեցէ աղնիւ Հայ աղղին,
Կեցէ դիցազն տանս Հայկայ, կեցէ ի փառս իմ աղղին։

Ի 1876. Ի փետրվարի 21. Ի Ս. Պ. Բուրգ։



Chippewa Campfire
15647-15650

2013

Chippewa Campfire
15647-15650

2013

